



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ր Ա Մ Ա Ն

01 օգոստոսի 2017 թվականի N 142 - Ա

ԾԱԽՍԱԿԱԶՄՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N1400-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կանոնադրության 12-րդ կետի դ) ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հավանություն տալ ծախսակազմման վերաբերյալ ուղեցույցին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2017թ. օգոստոսի 01

Երևան

Հավելված

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարության ջրային
տնտեսության պետական կոմիտեի նախագահի
2017թ.-ի օգոստոսի -----ի թիվ ---- -Ա հրամանի

Ծախսակազմման ուղեցույց

*(ըստ բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր
ուղեցույցի)*

1. Ներածություն

Սույն ուղեցույցը մշակվել է համաձայն Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցի՝ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. հունիսի 23-ի թիվ 311-Ա հրամանով (Հավելված 5) և համապատասխանեցված է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի բյուջետային ծրագրերի ծախսակազմման պահանջներին:

Այն ներառում է ծախսակազմման առընչվող բաժիններ ՀՀ պետական բյուջեի կողմից իրականացվող հետևյալ տիպի ծրագրերի և միջոցառումների համար.

1. Ընթացիկ բնույթի միջոցառումներ
2. Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների հետ կապված միջոցառումներ
3. Օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում միջոցառումներ (որտեղ ծախսակազմման գործընթացը մաս է կազմում գնումների գործընթացի):

Վերը նշված միջոցառումների կամ ծրագրերի առանձնահատկություններին համապատասխան՝ սույն ուղեցույցը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ուղեցույց (ընթացիկ բնույթի միջոցառումների համար),
2. Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ուղեցույց (ոչ ֆինանսական ակտիվների գծով միջոցառումների համար)
3. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում ՀՀ-ում վարկային և դրամաշնորհային ծրագրեր իրականացնող հիմնական կազմակերպությունների գնումների ստանդարտացված փաստաթղթերի հղումներ (առցանց):

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԾԱԽՍԱԿԱԶՄՄԱՆ
ՈւՂԵՑՈՒՅՑ

(Ընթացիկ բնույթի միջոցառումների համար)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
ԾԲ	Ծրագրային բյուջետավորում
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսային ծրագրի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ	6
2. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՀԻՄՔՈՒՄ ԴԻՎԱԾ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	7
3. ԾԱԽՍԱԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	10
4. ԾԱԽՍԱԿԱԶՄՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ	11
5. ԾԱԽՍԵՐԻ ՕՐՅԵԿՏԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ	13
6. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ/ԾԱԽՍԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	17
6.1 Ծախսերի օբյեկտին առնչվող ծախսերի բացահայտումը	17
6.2 Ծախսերի դասակարգումը	18
6.2.1 Ծախսերի դասակարգումն ըստ ծախսային տարրերի/ռեսուրսների	19
6.2.2 Ծախսերի դասակարգումն ըստ ծախսերի բնույթի	19
6.2.3 Ծախսերի դասակարգումն ըստ ծախսերի վարքագծի	20
7. ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԳՐՈՒՄԸ	22
7.1 Ծախսերի ուղղակի վերագրումը	22
7.2 Ծախսերի վերագրումը բաշխումների միջոցով	22
7.2.1 Բաշխման հիմքը	23
7.2.2 Ծախսերի վերագրման գործընթացի նկարագրությունը	24
7.2.3 Գործնական նկատառումներ ծախսերի բաշխումների կիրառության վերաբերյալ	26
7.3 Ստանդարտ ծախսերը	26
7.4 Սահմանային ծախսերը	27
7.5 Հաշվարկների իրականացումը և արդյունքների ստուգումը	28
8. ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԾԱԽՍԱԿԱԶՄՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՅԼ ՀԱՐՅԵՐ	29
8.1 Աճողական բյուջետավորում	29
8.2 Ոչ աճողական բյուջետավորում	31

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ծախսերի վերաբերյալ տեղեկատվության օգտագործումը	34
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ծախսակազմման նպատակը	36
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ծախսերի օբյեկտները	37
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Ծախսերի օբյեկտին առնչվող ծախսերը և դրանց դասակարգումը	38
ՀԱՎԵԼՎԱԾ 4.1 Ծախսերի օբյեկտին առնչվող ծախսերը և դրանց դասակարգումը (ստուգաթերթ)	39
ՀԱՎԵԼՎԱԾ 5. Ծախսերի բաշխման նպատակով ծախսային գործոնների կիրառության տարածված օրինակներ	41
ՀԱՎԵԼՎԱԾ 6. Անուղղակի ծախսերի բաշխման աղյուսակ	43
ՀԱՎԵԼՎԱԾ 7. Ծախսերի վերագրման աղյուսակ	44
ՀԱՎԵԼՎԱԾ 8. Ծախսակազմման հաշվարկների իրականացումը և արդյունքների ստուգումը	45
ՀԱՎԵԼՎԱԾ 9. Ծախսային ստանդարտների գույքագրման աղյուսակ	47
ՀԱՎԵԼՎԱԾ 10. Ծախսային գործոնները և դրանց ազդեցություն մեխանիզմները	48
ՀԱՎԵԼՎԱԾ 11. Աճողական բյուջետավորման և գործոնային վերլուծության աղյուսակ	49
ՀԱՎԵԼՎԱԾ 12. Ոչ աճողական բյուջետավորման ձևաչափ	50

1. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Սույն ուղեցույցի նպատակն է ուղղորդել բյուջետային ծրագրերի ծախսակազմման գործընթացը՝ նկարագրելով ծախսակազմման գործընթացի հիմնական փուլերը, կայացվող որոշումները, հիմնական կատեգորիաներն ու հասկացությունները, կիրառվող մոտեցումներն ու տեխնիկաները և այլ անհրաժեշտ ցուցումներ, որոնք ուղղված են ապահովելու բյուջետային ծրագրերի ծախսակազմման գործընթացի միասնականությունը, հետևողականությունը և նպատակայնությունը:
2. Ուղեցույցը նախատեսված է պետական մարմինների և ՖՆ այն աշխատակիցների համար, ովքեր անմիջականորեն ներգրավված են բյուջետային ծրագրերի ծախսակազմման իրականացման կամ դրա վերաբերյալ որոշումների կայացման գործառույթներում: Վերջիններս առնվազն ներառում են պետական մարմիններում և ՖՆ-ում բյուջետային ծրագրերի կառավարման համար պատասխանատու պաշտոնատար անձինք, ինչպես նաև ոլորտային և ֆինանսական/հաշվապահական ստորաբաժանումների այն աշխատակիցները, որոնք ներգրավված են այդ ծրագրերի/միջոցառումների գծով ծախսերի պլանավորման, բյուջետային հայտերի մշակման, վերլուծության և քննության գործառույթներում:
3. Թեև սույն ուղեցույցը նախատեսված է բյուջեների պլանավորման փուլում բյուջետային ծրագրեր ծախսակազմման գործառույթների համար, այդուհանդերձ, դրանում սահմանված ծախսակազմման հիմնարար սկզբունքները, կիրառվող քայլերը, հասկացությունները և մոտեցումները կարող են կիրառվել նաև այլ նպատակներով իրականացվող ծախսակազմումների և որոշումների կայացման ժամանակ (օրինակ՝ գնագոյացում, ռեսուրսների վերաբաշխում, արդյունավետության գնահատում և այլն):
4. Ուղեցույցը չի փոխարինում ՖՆ կողմից պետական մարմիններին տրամադրվող ՄԺԾԾ և բյուջետային հայտերի կազմման մեթոդական ցուցումներին, կամ այդ ոլորտում գործող իրավական ակտերին, այլ լրացնում է վերջինիս, ներկայացնելով բյուջետային ծրագրերի ծախսակազմման համակարգված և նպատակադրված գործընթացներ՝ հիմնվելով այդ ոլորտում առկա լավագույն փորձի վրա:
5. Այս ուղեցույցը հանդիսանում է ընդհանուր բնույթի ուղեցույց և սահմանում է ընդհանուր կանոններ և մոտեցումներ, որոնք անհրաժեշտ են բյուջետային ծրագրերի միջոցառումների գծով ծախսակազմում իրականացնելու համար:
6. Անհրաժեշտության դեպքում առանձին բյուջետային ծրագրերի, միջոցառումների կամ ոլորտների համար կարող են սահմանվել նաև ծախսակազմման մանրամասն ուղեցույցներ, որոնք կարտահայտեն այդ ծրագրերի, միջոցառումների կամ ոլորտներում ծախսակազմման կոնկրետ առանձնահատկությունները:

2. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Սույն ուղեցույցը հիմնվում է հետևյալ ուղղորդիչ սկզբունքների վրա .

Ծախսակազմումը հանդիսանում է նպատակաուղղված գործունեություն

7. Ծախսակազմման գործընթացը պետք է համապատասխանեցվի այն նպատակներին, որոնց ծառայելու է ծախսերի վերաբերյալ ստացվող տեղեկատվությունը: Նախքան որևէ ծախսի բացահայտումը կարևոր է, որ բոլոր շահագրգիռ կողմերը հասկանան և համաձայնվեն, թե որ կոնկրետ կառավարչական որոշմանն է աջակցելու այդ տեղեկատվությունը: Այդ նպատակները և որոշումները կարող են լինել բազմաբնույթ և բազմապիսի և դրանցից յուրաքանչյուրը կարող է պահանջել ծախսերի վերաբերյալ տարբեր տեղեկատվության շրջանակներ:

8. Օրինակ նոր տիպի ծառայության կամ միջոցառման գծով ծախսակազմումը և գոյություն ունեցող ծառայությունը/միջոցառումը ընդլայնելու (լրացուցիչ պահանջարկի բավարարում) նպատակով իրականացվող ծախսակազմումը կարող են պահանջել որոշակիորեն տարբերվող տեղեկատվություն ծախսերի վերաբերյալ: Եթե առաջին դեպքում որոշումների կայացման առումով կարևոր է միջոցառման գործարկման և իրականացման հետ կապված բոլոր ծախսերը, ապա երկրորդ դեպքում կարևոր են այն լրացուցիչ ծախսերը, որոնք առաջ են գալիս լրացուցիչ ծավալներով ծառայությունների/միջոցառման իրականացման արդյունքում, այլ կերպ ասած, աճողական կամ սահմանային ծախսերը:

Ծախսերը ոչ միշտ են փոխվում ծավալների փոփոխությանը համամասնորեն

9. Ծախսերն ունեն տարբեր վարքագծեր, այսինքն տարբեր կերպ են արձագանքում ծավալների փոփոխությանը և ոչ միշտ են փոխվում դրա փոփոխությանը համամասնորեն: Կան բազմաթիվ գործոններ, որոնք ազդում են իրավիճակի փոփոխության արդյունքում ծախսերի մակարդակի փոփոխության վրա:

10. Այդ առումով արդյունավետ ծախսակազմում իրականացնելու համար կարևոր է հասկանալ կայուն և փոփոխուն ծախսերը և դրանց վարքագիծը, ինչպես նաև այն, թե որքանով են առկա կարողությունները բավարար ծառայությունների/ միջոցառումների լրացուցիչ ծավալներ ապահովելու կամ դրանք կրճատելու համար:

Ծախսակազմումը պետք է իրականացվի հետևողականորեն

11. Միևնույն նպատակով ծախսակազմումը ժամանակի ընթացքում պետք է իրականացվի հետևողականորեն՝ միևնույն ծրագրի կամ միջոցառման համար կիրառելով ծախսակազմման համադրելի մոտեցումներ: Դա հնարավորություն կտա ժամանակի

ընթացքում ստանալ ծախսերի վերաբերյալ համադրելի տեղեկատվություն և պատմական տվյալների հիման վրա իրականացնել համեմատություններ:

Ծախսակազմումը, գնագոյացումը և ֆինանսավորումը տարբեր գործընթացներ են

12. Ծախսակազմումը, գնագոյացումը և ֆինանսավորումը հաճախ շփոթության տեղիք են տալիս և թեև դրանք հանդիսանում են սերտորեն փոխկապակցված և շատ մոտ գործընթացներ այնուամենայնիվ, վերջիններս հանդիսանում են երեք տարբեր գործառույթներ:

13. Ծախսակազմումը հանդիսանում է կառավարչական գործառույթ, որն իրականացվում է տարբեր նպատակներով, ինչպիսիք են օրինակ կատարողականի գնահատումը, ռեսուրսներն արդյունքների հետ փոխկապակցումը, արդյունավետության գնահատումը, ռեսուրսների վերաբաշխումը և այլն: Ծախսակազմումներն իրականացվում են նաև մատուցվող ապրանքների և ծառայությունների ինքնարժեքը գնահատելու համար:

14. Անկախ ծառայության դիմաց վճարի սահմանման հանգամանքից և բյուջետային ֆինանսավորման մոտեցումներից ու մակարդակից, միևնույն է ցանկացած ծառայության համար անհրաժեշտ է հստակորեն հասկանալ դրա հետ կապված ծախսերի իրական կառուցվածքն ու մակարդակը:

15. Ի տարբերություն ծախսակազմման, գնագոյացման գործառույթի նպատակն է պարզել տվյալ ծառայության համար վճարի սահմանման նպատակահարմարությունը և դրա չափը: Այդ գործընթացում բացի ծախսերից հաշվի են առնվում նաև բազմաթիվ այլ գործոններ, ինչպիսիք են պահանջարկը, հաճախորդի վրա տնտեսական ազդեցությունը, մասնավոր հատվածի հետ մրցակցությունը և այլն:

16. Տվյալ միջոցառման գծով ծախսերի իրական մակարդակի և ֆինանսավորման մակարդակի միջև համեմատությունները կարևոր են այն դեպքում, երբ առկա է դրանց անհամապատասխանություն՝ օրինակ սուբսիդավորման պարագայում: Տվյալ միջոցառման դիմաց տրամադրվող ֆինանսավորման մակարդակը կախված է կառավարության գերակայություններից և հասանելի ռեսուրսների մակարդակից: Ծախսերի իրական մակարդակի և ֆինանսավորման միջև ցանկացած շեղում ենթադրում է որոշակի կառավարչական միջամտություն և որոշումների կայացում, որն իր հերթին պահանջում է ծախսերի մանրամասն վերլուծություններ:

Ծախսակազմումը ենթադրում է պատշաճ փաստաթղթավորում

17. Ծրագրերի ծախսակազմման գործընթացի յուրաքանչյուր փուլում պետք է ապահովվի պատշաճ փաստաթղթավորում: Այդ նպատակով ծրագրերի ծախսակազմման համար պատասխանատու անձինք պետք է սիստեմատիկորեն փաստաթղթավորեն ծախսերի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները, դրանց ստացման նպատակով կիրառվող բոլոր ենթադրությունները, գործընթացները և հաշվարկները: Ծախսերի վերաբերյալ տվյալների աղբյուրներ կարող են հանդես գալ ինչպես փաստացի և

պատմական ծախսերը, այնպես էլ բյուջեները, նախահաշիվները, կանխատեսումները, ստանդարտ ծախսերը և այլն:

Ծախսակազմումը պետք է լինի մատչելի և ծախսարդյունավետ գործառույթ

18. Ծախսակազմման գործառույթները կապված են որոշակի ծախսերի հետ և որքան ավելի բարդ և ճշգրիտ է համակարգը, այնքան ավելի մեծ են այդ գործառույթի իրականացման հետ կապված ծախսերը: Ծախսակազմման գործառույթները ներդնելիս անհրաժեշտ է հավասարակշռել հետևյալ մրցակցող տարրերը՝ պատեհաժամություն, ճշտություն, բարդություն և մատչելիություն: Այն պետք է ոչ միայն բավարարի առկա կարիքները, այլև միաժամանակ լինի ծախսարդյունավետ և մատչելի: Պետք է խուսափել այն իրավիճակներից, երբ ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ստացման համար կատարվող ներդրումները գերազանցում են այդ տեղեկատվության տված օգուտները:

3. ԾԱԽՍԱԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

19. Ընդհանուր առմամբ, ծախսակազմումը կարելի է սահմանել որպես որևէ նպատակով (ապրանքի արտադրություն, ծառայության մատուցում և այլն) սպառվող ռեսուրսների (կամ ծախսերի) բացահայտման, վերագրման և հաշվարկման գործընթաց: Այն հանդիսանում է կարևոր կառավարչական գործառույթ, քանզի ծախսերի վերաբերյալ համակարգված, որակյալ, պատեհաժամ, ճիշտ և հուսալի տեղեկատվության առկայությունը կենսական նշանակություն ունի իրազեկված և լավ հիմնավորված կառավարչական որոշումների կայացման համար:

20. Այդ առումով, կարևոր է, որ ծախսակազմման գործընթացում ներգրավված անձինք լավ հասկանան ծախսակազմման հիմնարար սկզբունքները և մոտեցումները և թե ինչպես պետք է դրանք հետևողականորեն կիրառվեն որոշումների կայացման, պլանավորման և կառավարման այլ գործառույթներում:

21. Անկախ նրանից, թե ինչ նպատակով է իրականացվում ծախսակազմումը և ինչ կարևորություն ունի ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը, միևնույնն է, ցանկացած ծախսակազմման գործառույթ կարելի է ներկայացնել հետևյալ քայլերի հաջորդականության տեսքով:

- Ծախսակազմման նպատակների սահմանում - ինչ նպատակով է օգտագործվելու ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը,
- Ծախսերի օբյեկտի սահմանում – ինչն է ծախսակազմման թիրախը (ծառայությունը, արդյունքի ցուցանիշի միավորը, գործառույթը և այլն),
- Համապատասխան ռեսուրսների բացահայտում – որ ռեսուրսներն/ծախսերն են համապատասխանում կամ առնչվում ծախսակազմման նպատակներին և ծախսերի օբյեկտին,
- Ծախսերի դասակարգում – որ ծախսերն են ծախսերի օբյեկտի կամ նպատակի հետ կապված ուղղակիորեն և որոնք են որ ուղղակիորեն չեն կապված,
- Ծախսերի վերագրման մեթոդաբանության հստակեցում – ինչ եղանակով կամ մոտեցմամբ պետք է ծախսերը վերագրվեն ծախսերի օբյեկտներին,
- Ռեսուրսների օգտագործման/սպառման չափերի գնահատում բնաիրային (քանակական/ծավալային) և դրամային արտահայտությամբ:

4. ԾԱԽՍԱԿԱԶՄՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

22. Ծախսերը կարող են սահմանվել որպես որևէ նպատակով (ապրանքի արտադրություն, ծառայության մատուցում և այլն) սպառվող ռեսուրսների ծավալ և/կամ արժեք, իսկ Ծախսակազմումը՝ որպես այդ ծախսերը հաշվելու և որևէ օբյեկտի (ծախսերի օբյեկտի) վերագրելու կամ ամրագրելու գործընթաց կամ տեխնիկա:

23. Ծախսակազմումը նպատակաուղղված գործընթաց է և այն իրականացնելիս, նախքան ծախսակազմման վերաբերյալ մոտեցումների և կիրառվող մեթոդների վերաբերյալ որոշումների կայացումը, անհրաժեշտ է նախ և առաջ հստակեցնել այն նպատակները, որի համար օգտագործվելու է ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը: Այդ նպատակները կարող են ազդել բազմաթիվ գործոնների վրա, որոնք ի վերջո հաշվի են առնվում ծախսակազմման ընթացքում որոշումների կայացման ժամանակ և կարող են ազդել առանձին ծախսերի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքին:

24. Ծախսակազմման գործառույթներն, ընդհանուր առմամբ, կարող են հետապնդել տարբեր նպատակներ և օժանդակել տարբեր տիպի որոշումների կայացմանը: Սույն փաստաթղթի հավելված 1-ում ներկայացված են մի քանի օրինակներ, թե ինչ նպատակներով կարող է օգտագործվել ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը:

25. Կախված այն հանգամանքից, թե ինչ նպատակով է օգտագործվում ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ծախսակազմման գործընթացում կարող են կիրառվել տարբեր մոտեցումներ: Օրինակ՝ ծառայության ընդլայնման վերաբերյալ որոշումը կարող է պահանջել աճողական կամ սահմանային ծախսերի վերլուծություն, սուբսիդավորման վերաբերյալ որոշումն ամենայն հավանականությամբ կպահանջի ամբողջական ծախսակազմում և հնարավոր է նաև ծախսերի բաշխումների իրականացում և այլն:

26. Այս առումով ծախսակազմման համակարգը պետք է համապատասխանեցվի այն նպատակներին, որոնց համար կիրառվելու է ծախսերի վերաբերյալ ստացվող տեղեկատվությունը: Նպատակի սահմանումը որոշիչ նշանակություն ունի ծախսակազմման մեթոդաբանության ընտրության և աշխատանքների կազմակերպման առումով:

27. Ծախսակազմման նպատակների հստակեցումը գործնականում կարող է կապված լինել որոշակի դժվարությունների հետ: Այդ առումով, ստորև բերված են ցուցումներ, որոնք կօժանդակեն այդ նպատակների հստակեցմանը:

28. Ծախսակազմման նպատակների վերաբերյալ հայտարարությունը պետք է փաստաթղթավորվի և պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

- այն կոնկրետ կառավարչական որոշումը, որին աջակցելու է ծախսակազմումը,
- այն հիմնական ենթադրությունները, որոնք օգտագործվել են ծախսակազմման նպատակները սահմանելիս,

- այն հայեցակարգային և/կամ օրենսդրական դրույթները, որոնք պահանջում են, որ ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունն ազդի այդ որոշումների կայացման վրա՝ ներառյալ օգտագործվող տվյալների աղբյուրները,
- դիտարկվող ժամանակային հորիզոնը կամ ժամանակահատվածը,
- հաճախականությունը, որով պահանջվելու է ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը:

29. Ընդհանուր առմամբ, ծախսակազմման նպատակները կարելի է խմբավորել հետևյալ չորս հիմնական խմբերում, որոնցից յուրաքանչյուրի ներքո կարող են լինել բազմաթիվ տարբերակներ՝

- Պահանջվող ռեսուրսների գնահատում – նպատակն է գնահատել նոր, շարունակական կամ դադարեցվող միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների մակարդակը:
- Արդյունքների/կատարողականի գնահատում – նպատակն է չափել և գնահատել տվյալ միջոցառման կատարողականը կամ արդյունքները:
- Գնագոյացում կամ ծառայությունների դիմաց վճարների սահմանում - նպատակն է սահմանել այն հանրային ապրանքների և ծառայությունների դիմաց վճարների/գների չափը, որոնց գծով ծախսերն ամբողջությամբ կամ մասնակիորեն ֆինանսավորվում են ոչ բյուջետային միջոցների հաշվին:
- Ծրագրի/միջոցառումների իրականացման փարբերակների գնահատում – նպատակն է պարզել ծրագրի/միջոցառման իրականացման այլընտրանքները և գնահատել ծախսերի վրա դրանց ազդեցությունը:

30. Սույն ուղեցույցի հավելված 2-ում ներկայացված է ծախսակազմման նպատակի սահմանման ձևաչափի օրինակ: Ձևաչափը օգտակար է ծախսերի վերաբերյալ տեղեկատվության օգտագործման նպատակների սահմանման և այդ տեղեկատվության դետալացման մակարդակը որոշելու համար:

5. ԾԱԽՍԵՐԻ ՕՐՅԵԿՏԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

31. Ծախսերի օբյեկտը դա այն միավորն է, որին վերագրվում են կամ որի վերաբերյալ, ըստ էության, կառուցվում են ծախսային գնահատականները: Դա կարող է լինել ինչպես մատուցվող ծառայությունը և արդյունքի միավորը, այնպես էլ ցանկացած այլ օբյեկտ:

32. Ծախսերի օբյեկտի ընտրությունը պետք է բխի ծախսակազմման նպատակներից: Ընդ որում, միևնույն միջոցառման գծով ծախսակազմում իրականացնելիս կարող են սահմանվել ծախսերի մեկից ավելի օբյեկտներ:

33. Ծախսերի օբյեկտի ընտրությունը ազդում է ծախսակազմման գործընթացի բարդության վրա և այդ համակարգի շահագործման ծախսերի վրա: Ծախսերի օբյեկտի շուրջ որոշումներ կայացնելիս անհրաժեշտ է բալանսավորել պահանջվող տեղեկատվության մակարդակն ու ծախսակազմման հետ կապված գործառնական ծախսերի մակարդակը:

34. Օրինակ, մեկից ավելի տարբեր արդյունքային ցուցանիշներով բնութագրվող միջոցառումների պարագայում արդյունքի միավորները ծախսերի օբյեկտ սահմանելու դեպքում ծախսակազմման հետ կապված գործառնական ծախսերը կարող են զգալիորեն գերազանցել այն համապատասխան ծախսերը, որ կպահանջվեն, եթե ծախսերի օբյեկտ սահմանվի բուն միջոցառումը: Պատճառն այն է, որ արդյունքի միավորին ծախսերի ամբողջական վերագրումն այս դեպքում, հավանաբար, կպահանջի ծախսերի բաշխումների իրականացում (աշխատատար գործընթաց է), որը սակայն մեծ հավանականությամբ չի պահանջվի միջոցառման մակարդակով ծախսերի օբյեկտը սահմանելու դեպքում: Այս դեպքում չի առաջանա նման բաշխումների իրականացման անհրաժեշտություն:

35. Ծախսերի օբյեկտի ճիշտ ընտրությունը հանդիսանում է ծախսակազմման գործընթացի կարևոր տարրերից մեկը, ինչը կանխորոշում է ողջ գործընթացի տրամաբանությունն ու արդյունավետությունը:

36. Ծախսերի օբյեկտների սահմանման համար կարող են կիրառվել հետևյալ չորս հիմնական կատեգորիաները՝

- Միջոցառումը կամ ծառայությունը,
- Արդյունքի միավորը,
- Կազմակերպական միավորը,
- Գործընթացը:

37. Միջոցառումը կամ ծառայությունը հանդիսանում են ծախսերի օբյեկտների առավել տարածված տարատեսակը (օրինակ՝ գրադարանային ծառայությունը): Վերջիններս հիմնականում կիրառվում են այն դեպքում, երբ՝

- հստակ են մատուցվող ծառայությունները կամ իրականացվող միջոցառումները և դրանց գծով արդյունքային ցուցանիշները, և

- ծառայությունների/միջոցառումների գծով ծախսերի առանձնացումը և հաշվառումը կապված չեն զգալի չափերի աշխատանքային, ֆինանսական և այլ ծախսումների հետ:

38. Արդյունքի միավորը դա տվյալ ծրագրի միջոցառման կամ ծառայության շրջանակներում հանրությանը մատուցվող ապրանքների և ծառայությունների գծով արդյունքային ցուցանիշի միավորն է (օրինակ՝ մեկ աշակերտը ըստ աշակերտի թվի ֆինանսավորմամբ հանրակրթական ծառայությունների դեպքում): Արդյունքի միավորը որպես ծախսերի օբյեկտ կարող է կիրառվել այն դեպքերում, երբ՝

- հստակ են մատուցվող ծառայությունները կամ միջոցառումները և դրանց գծով արդյունքային ցուցանիշները,
- մատուցվող ծառայության/միջոցառման արդյունքային ցուցանիշները համասեռ են և դրանց միավորի գծով ծախսերը համեմատաբար կայուն են, և
- Արդյունքի ցուցանիշի միավորի գծով ծախսերի առանձնացումը և հաշվառումը չի հանդիսանում աշխատատար և ծախսատար գործընթաց:

Այս մոտեցումը առավել տարածված է Արդյունքին ուղղված բյուջետավորման համակարգերում:

39. Կազմակերպական միավորը դա կազմակերպությունն է, դրա տարածքային, առանձնացված կամ կառուցվածքային ստորաբաժանումը, որն անմիջականորեն իրականացնում է հանրային ապրանքների կամ ծառայությունների մատուցումը: Որպես կանոն, կազմակերպական միավորը ծախսերի օբյեկտ դիտարկվում է հիմնականում այն դեպքում, երբ հնարավոր չի հստակ սահմանել հանրությանը մատուցվող ծառայությունը և/կամ դրա գծով արդյունքային ցուցանիշները:

40. Զարգացած երկրներում կազմակերպական միավորները հիմնականում կիրառվում են որպես միջանկյալ ծախսային կենտրոններ՝ այդ միավորների կողմից մատուցվող ծառայությունների գծով ծախսերի հետագա բաշխումների իրականացման համար: Ավանդական բյուջետավորման համակարգերում կազմակերպական միավորները հանդիսանում են ծախսերի օբյեկտի առավել տարածված տարատեսակը (տիպիկ օրինակ են հանդիսանում կազմակերպության պահպանման ծախսերը):

41. Գործընթացները հանդիսանում են տվյալ կազմակերպական միավորի կողմից իրականացվող առանձին գործառույթներ, որոնք չեն հանդիսանում հանրությանը մատուցվող ապրանքներ կամ ծառայություններ, այլ հանդիսանում են դրանց աջակցող կամ ներքին գործառույթներ (օրինակ անձնակազմի կառավարման կամ հաշվապահական հաշվառման գործառույթները):

42. Գործընթացները որպես ծախսերի օբյեկտներ դիտարկվում են հիմնականում այն դեպքում, երբ անհրաժեշտություն է առաջանում կազմակերպության վերադիր ծախսերը կամ ներքին ծառայությունների գծով ծախսերը բաշխել այդ կազմակերպության կողմից մատուցվող հանրային ապրանքների և ծառայությունների վրա: Նման մոտեցումը

հատկապես լայն տարածում ունի Գործողությունների վրա հիմնված բյուջետավորման համակարգերում:

43. Գործնականում ծախսերի օբյեկտներից առավել կիրառականը դա միջոցառումները/ծառայություններն ու արդյունքի միավորներն են, քանզի վերջիններս կարևոր նշանակություն ունեն ծրագրերի կատարողականը կամ արդյունքները գնահատելու և այլ կառավարչական որոշումների կայացման հարցում (օրինակ ծառայությունների դիմաց վճարների սահմանում և այլն):

44. Ստորև բերված են մի շարք ուղղորդիչ սկզբունքներ, որոնք անհրաժեշտ են ծախսերի օբյեկտները սահմանելու համար՝

- ծախսերի օբյեկտները պետք է փաստաթղթավորվեն և հստակ ներկայացվեն ծախսակազմման փաստաթղթերում,
- ծախսերի յուրաքանչյուր օբյեկտ պետք է համապատասխանի բյուջետային կոնկրետ միջոցառման, այսինքն չի կարող սահմանվել ծախսերի օբյեկտ, որը միաժամանակ վերաբերվի մեկից ավելի միջոցառումների,
- եթե միևնույն միջոցառման համար սահմանվում են մեկից ավելի ծախսերի օբյեկտներ, ապա դրանցից յուրաքանչյուրը պետք է հստակ առանձնացվի և հանդիսանա առանձին ծախսակազմման առարկա: Օրինակ եթե լաբորատոր բժշկական փորձաքննության ծառայությունների գծով միջոցառման ներքո իրականացվում են մեկից ավելի տարբեր նշանակության, բնույթի և բարդության փորձաքննություններ, որոնք իրականացվում են տարբեր մասնագիտացված լաբորատորիաների կողմից, ապա այս դեպքում փորձաքննությունների տիպերից յուրաքանչյուրը կարող է դիտարկվել որպես ծախսերի առանձին օբյեկտ, որոնք պետք է հստակ սահմանվեն և առանձնացվեն ծախսակազմման փաստաթղթերում:
- ելնելով ԾԲ բարեփոխումների տրամաբանությունից, ծախսերի օբյեկտ պետք է դիտարկել միջոցառումը/ծառայությունը կամ արդյունքի միավորը: Պետք է հնարավորության սահմաններում խուսափել կազմակերպական միավորը որպես ծախսերի օբյեկտ դիտարկելուց:
- արդյունքի միավորը որպես ծախսերի օբյեկտ պետք է դիտարկել միայն այն դեպքերում, երբ մատուցվող ծառայության արդյունքի ցուցանիշները համասեռ են և դրանց միավորի գծով ծախսերը համեմատաբար կայուն են,
- հնարավորության սահմաններում ծախսերի օբյեկտը պետք է սահմանել այնպես, որ հնարավոր լինի վերջինիս վերագրել դրա հետ կապված բոլոր ծախսերը,
- ծախսերի օբյեկտի շուրջ որոշումներ կայացնելիս անհրաժեշտ է բալանսավորել պահանջվող տեղեկատվության մակարդակն ու ծախսակազմման հետ կապված գործառնական ծախսերի մակարդակը,
- ծախսերի օբյեկտն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև հետագայում ծրագրերի կատարման, հաշվետվողականության և մոնիտորինգի հետ կապված առանձնահատկությունները: Պետք է խուսափել այն դեպքերից, երբ բյուջետային

շրջափուլի տարբեր փուլերում միևնույն բյուջետային ծրագրի/միջոցառման համար սահմանվում են ծախսերի տարբեր օբյեկտներ:

- գործնականում, կախված միջոցառման առանձնահատկություններից, միևնույն միջոցառման շրջանակներում ծախսերի օբյեկտները կարող են լինել բազմաթիվ, ոչ համասեռ և ունենալ ագրեգացման տարբեր մակարդակներ: Նման դեպքերը պետք է հստակորեն առանձնացվեն ծախսակազմման փաստաթղթերում՝ ներկայացնելով ծախսերի բոլոր օբյեկտները և դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:
- միևնույն միջոցառման շրջանակներում ծախսերի օբյեկտ դիտարկվող առանձին ծառայությունները կարող են մատուցվել մեկից ավելի ծախսային կենտրոնների միջոցով (օրինակ՝ տարբեր մարզերում միևնույն ծառայության մատուցումը առանձին մարզային ստորաբաժանումների միջոցով): Ծախսերի օբյեկտների սահմանման նման առանձնահատկություններն անհրաժեշտ է բացահայտել ծախսակազմման փաստաթղթերում, ինչը կօգնի հետագայում ծախսերի վերագրման մեխանիզմների հստակեցմանը:
- որոշ դեպքերում, հատկապես ՊՈԱԿ-ների միջոցով մատուցվող ծառայությունների պարագայում, միևնույն ծառայությունը տվյալ ՊՈԱԿ-ի կողմից կարող է մատուցվել ինչպես բյուջետային միջոցների հաշվին, այնպես էլ զուգահեռաբար իրականացվել ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում: Նման դեպքերում, կարող է պահանջվել ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծախսերի տարանջատում նույնատիպ այլ ծառայությունների հետ կապված ծախսերից: Այդ պարագայում վճարովի հիմունքներով իրականացվող ծառայություններն անհրաժեշտ կլինի դիտարկել որպես ծախսերի առանձին օբյեկտներ:
- որոշ դեպքերում, հատկապես փուլերով մատուցվող ծառայությունների պարագայում, որպես ծախսերի առանձին օբյեկտներ կարող են դիտարկվել տվյալ ծառայության առանձին փուլերը: Նման դեպքերում, կարող է պահանջվել առանձին փուլերի առնչվող ծախսերի տարանջատում այլ փուլերի համար նախատեսված ծախսերից:

45. Սույն ուղեցույցի հավելված 3-ում ներկայացված է ծախսերի օբյեկտի սահմանման ձևաչափի օրինակ:

6. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ/ԾԱԽՍԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

6.1 Ծախսերի օբյեկտին առնչվող ծախսերի բացահայտումը

46. Ծախսակազմման նպատակներն ու ծախսերի օբյեկտները հստակեցնելուց հետո անհրաժեշտ է պարզել, թե տվյալ նպատակի շրջանակներում ինչպիսի ռեսուրսներ են սպառվում ծախսերի օբյեկտների կողմից, կամ այլ կերպ ասած, անհրաժեշտ է սահմանել տվյալ նպատակին կամ ծախսերի օբյեկտին առնչվող ռեսուրսների/ծախսերի շրջանակն ու դրանց առանձնահատկությունները:

47. Կախված ծախսակազմման նպատակներից, այս կամ այն տիպի ռեսուրսը (կամ դրա գծով ծախսը) կարող է առնչվել կամ չառնչվել տվյալ ծախսերի օբյեկտին: Ստորև բերված են մի քանի օրինակներ, թե ինչպես կարող են ծախսակազմման նպատակներն ազդել առնչվող ծախսերի ընտրության վրա: Օրինակ, երբ դիտարկվում են տվյալ ծառայության ծավալների ավելացման հետ կապված լրացուցիչ աճողական ծախսերը, կապիտալ ներդրումների անհրաժեշտությունը կարող է չքննարկվել, եթե առկա կարողությունները բավարար են լրացուցիչ ծավալները մատուցելու համար:

48. Կամ օրինակ, երբ անհրաժեշտ է որոշում կայացնել նոր ծառայությունը սեփական ուժերով արտադրելու կամ այլ արտադրողներին պատվիրակելու վերաբերյալ, ապա ներքին ուժերով նոր ծառայության մատուցումը ամենայն հավանականությամբ կպահանջի առկա կարողությունների զարգացման նպատակով որոշակի ներդրումների իրականացում:

49. Մեկ այլ դեպքում, ծառայությունների մատուցման առկա մակարդակը նվազեցնելու վերաբերյալ որոշումը ամենայն հավանականությամբ չի ազդի կապիտալ ծախսերի մակարդակի վրա, քանզի վերջիններս կայուն ծախսեր են և անմիջական կապ չունեն արտադրության ծավալների փոփոխության հետ:

50. Ամեն դեպքում, անկախ ծախսակազմման նպատակներից, որպես կանոն, ծախսերի օբյեկտին առնչվող ծախսերը ներառում են՝

- տվյալ ծախսերի օբյեկտին առնչվող բոլոր ուղղակի ծախսերը,
- տվյալ ծախսերի օբյեկտին առնչվող անուղղակի ծախսերը, որոնք ներառված են համապատասխան բյուջետային ծրագրում/միջոցառման մեջ (ծրագրի/միջոցառման օժանդակ ծախսերի մասնաբաժինը),
- տվյալ ծախսերի օբյեկտին առնչվող անուղղակի ծախսերը, որոնք չեն ներառվում համապատասխան բյուջետային ծրագրում/միջոցառման մեջ (օրինակ ներքին ծառայությունների կամ կազմակերպության վերադիր ծախսերի մասնաբաժինը):

51. Ծախսակազմման նպատակներից կախված, որպես առնչվող ծախսեր կարող են դիտարկվել նաև տվյալ ծառայության արտադրության համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն օգտագործվող կապիտալ ակտիվների ամորտիզացիոն ծախսերը: Պետք է հիշել, որ դրամարկղային սկզբունքով բյուջետավորման նպատակով

ծրագրերի/միջոցառումների ծախսակազմում իրականացնելիս նշված ամորտիզացիոն ծախսերը գործնականում չեն դիտարկվում որպես առնչվող ծախսեր:

52. Ծախսակազմման այս փուլում պարզապես բացահայտվում և արձանագրվում են ծախսակազմման նպատակներին և ծախսերի օբյեկտներին առնչվող բոլոր ռեսուրսները/ծախսերը՝ առանց վերջիններիս սպառման չափերի կամ մակարդակի վերաբերյալ գնահատականներ տալու: Ամեն դեպքում, նախքան տվյալ ծախսերի օբյեկտին առնչվող ծախսերի շուրջ որոշման կայացումը, հաճախ օգտակար է դիտարկել բոլոր հնարավոր ծախսային կատեգորիաները:

53. Արդյունավետ և նպատակաուղղված ծախսակազմում իրականացնելու համար անհրաժեշտ է փաստաթղթավորել տվյալ ծախսերի օբյեկտին առնչվող բոլոր ծախսերը/ռեսուրսները, հստակ նշելով դրանց վերաբերյալ որոշման հիմնավորումը և այդ որոշմանը օժանդակող տեղեկատվության աղբյուրները: Առնչվող ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության համար որպես աղբյուր կարող են ծառայել փաստացի և պատմական ծախսերը, բյուջեները, կանխատեսումները, ստանդարտ ծախսերը և այլն: Օրինակ, նոր ծառայությունների համար որպես աղբյուր կարող են հանդես գալ բյուջետային նախահաշիվները, իսկ շարունակական ծառայությունների համար կարող է օգտակար լինել փաստացի ծախսերի նախորդ տարիների միջին ցուցանիշները (համապատասխան ճշգրտումներով):

54. Միաժամանակ, կարևոր է, որ առնչվող ծախսերի վերաբերյալ որոշում կայացնելիս շահագրգիռ կողմերի հետ անցկացվեն քննարկումներ և խորհրդակցություններ, համոզվելու համար, որ բոլոր առնչվող ծախսերը ներառվել են:

6.2 Ծախսերի դասակարգումը

55. Ծախսակազմումը չի հանդիսանում ճշգրիտ գիտություն և առանձին ծախսերի հատկանիշները կամ առանձնահատկությունները կարող են որոշիչ դեր խաղալ ծախսակազմման գործընթացում կայացվող որոշումների համար: Ուստի, ծախսակազմման հաջորդ տրամաբանական քայլն է տվյալ ծախսերի օբյեկտին առնչվող ծախսերի դասակարգումն ըստ վերջիններիս առանձնահատկությունների:

56. Ծախսերի դասակարգումը կարող է իրականացվել տարբեր հիմքերի վրա: Ժամանակակից Արդյունքին ուղղված բյուջետավորման համակարգերում ծախսակազմման նպատակով կիրառվող ծախսերի առավել տարածված դասակարգումներն են ծախսերի դասակարգումն ըստ ծախսային տարրերի/ռեսուրսների տիպի, ըստ ծախսերի բնույթի և ըստ դրանց վարքագծի: Ծախսերի վերոհիշյալ դասակարգումներից յուրաքանչյուրը ծառայում է կոնկրետ նպատակների և կարևոր է արդյունավետ ծախսակազմում իրականացնելու համար:

6.2.1 Ծախսերի դասակարգումն ըստ ծախսային տարրերի/ռեսուրսների

57. Ծախսերի դասակարգումն ըստ ծախսային տարրերի/ռեսուրսների տիպի ցույց է տալիս ծախսերի օբյեկտի կողմից սպառվող ռեսուրսների տիպը (աշխատուժի գծով ծախսեր, նյութական ծախսեր և այլն): Այն հիմնականում համապատասխանում է բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգմանը:

6.2.2 Ծախսերի դասակարգումն ըստ ծախսերի բնույթի

58. Ծախսերի դասակարգումն ըստ ծախսերի բնույթի ցույց է տալիս, թե ինչպես է տվյալ ռեսուրսն առնչվում/կապված համապատասխան ծախսերի օբյեկտին: Այդ նպատակով առանձնացվում են ուղղակի ծախսեր և անուղղակի ծախսեր:

59. **Ուղղակի ծախսերն** այն ծախսերն են, որոնք կարող են ամբողջությամբ, ուղղակիորեն և հեշտությամբ վերագրվել բացառապես տվյալ ծախսերի օբյեկտին: Օրինակ ապրանքների և ծառայությունների արտադրության հետ կապված ուղղակի ծախսերը սովորաբար ներառում են վերջիններիս արտադրության մեջ անմիջականորեն ներգրավված աշխատուժի գծով ծախսերը, ուղղակի գործառնական ծախսերը (օրինակ նյութական ծախսերը և այլն) և այլ ծախսեր, որոնք հեշտությամբ և ամբողջությամբ կարող են վերագրվել տվյալ ապրանքին կամ ծառայությանը:

60. **Անուղղակի ծախսերն** այն ծախսերն են, որոնք վերաբերվում են մեկից ավելի ծախսերի օբյեկտների և չեն կարող ամբողջությամբ և հեշտությամբ վերագրվել որևէ մեկ ծախսերի օբյեկտի (օրինակ մեկից ավելի ծառայություններ մատուցող կազմակերպության հաշվապահական կամ անձնակազմի կառավարման գործառույթների գծով ծախսերը կարող են վերաբերվել տվյալ կազմակերպության կողմից մատուցվող բոլոր ծառայություններին միաժամանակ և միայն դրանց որոշակի մասնաբաժինն է, որ կարելի է վերագրել առանձին ծառայություններին):

61. Անուղղակի ծախսերն իրենց հերթին կարող են լինել երկու տիպի՝ անուղղակի ծախսեր, որոնք առնչվում են տվյալ ծախսերի օբյեկտին և ներառված են համապատասխան բյուջետային ծրագրում/միջոցառման մեջ և անուղղակի ծախսեր, որոնք առնչվում են տվյալ ծախսերի օբյեկտին, սակայն ներառված չեն համապատասխան բյուջետային ծրագրում/միջոցառման մեջ:

62. **Անուղղակի ծախսերը, որոնք առնչվում են տվյալ ծախսերի օբյեկտին և ներառված են համապատասխան բյուջետային ծրագրում/միջոցառման մեջ,** հիմնականում (բայց ոչ բացառապես) մեկից ավելի ծախսերի օբյեկտ ունեցող ծրագրերի/միջոցառումների գծով օժանդակ ծախսերն են: Ծրագրի/միջոցառման օժանդակ ծախսերը պարտադիր ներառվում են տվյալ ծրագրում/միջոցառման մեջ և հիմնականում ուղղակիորեն կապ չունեն համապատասխան ծառայությունների (ծախսերի օբյեկտների) մատուցման հետ, այլ օժանդակում են ծառայությունների մատուցման հետ կապված գործառույթների իրականացմանը: Օրինակ՝ ծրագրի/միջոցառման կառավարման և վերահսկողության գծով ծախսերը, որոնք ներառված են տվյալ ծրագրի/միջոցառման մեջ:

63. **Անուղղակի ծախսերը, որոնք առնչվում են տվյալ ծախսերի օբյեկտին, սակայն ներառված չեն համապատասխան բյուջետային ծրագրում/միջոցառման մեջ,** հիմնականում վերաբերվում են այն դեպքերին, երբ կազմակերպության կորպորատիվ կամ վարչական ծառայությունները (կամ այլ կերպ ասած ներքին ծառայությունները) առանձնացված են համապատասխան ծրագրերից/ միջոցառումներից և ներառված են մեկ այլ ծրագրում/միջոցառման տակ: Տիպիկ օրինակ է հանդիսանում պետական մարմնի պահպանման ծախսերի գծով ծրագիրը (վարչական բնույթի ծրագիրը), որտեղ ներառված են տվյալ պետական մարմնի կողմից իրականացվող բոլոր ծրագրերին առնչվող վարչական և այլ անուղղակի ծախսերը:

64. Ի տարբերություն ծրագրի օժանդակ ծախսերի, այս ներքին ծառայությունները չեն ներառվում համապատասխան ծախսերի օբյեկտը սահմանող ծրագրերի/միջոցառումների տակ, այլ դիտարկվում են որպես առանձին միջոցառում կամ ծրագիր՝ թեև գործնականում իրենցից ներկայացնում են ներքին ծառայություններ, այլ ոչ թե հանրությանը մատուցվող ապրանք կամ ծառայություն:

65. Վերջիններս սովորաբար ներառում են պետական մարմինների ֆինանսական կառավարման, անձնակազմի կառավարման, իրավաբանական ծառայությունների, հասարակական կապերի, կառավարման և վերահսկողության, գնումների, գույքի կառավարման և այլ վարչական բնույթի գործառույթներն ու դրանց գծով ծախսերը:

66. Անհրաժեշտ է զգուշություն ցուցաբերել ծախսերը «ուղղակի» կամ «անուղղակի» դասակարգելիս: Ծախսերը ուղղակի կամ անուղղակի պետք է դիտարկվեն միայն համապատասխան ծախսերի օբյեկտի նկատմամբ, հետևաբար միևնույն ծախսատեսակը տարբեր ծախսերի օբյեկտների համար կարող է հանդես գալ միաժամանակ թե՛ որպես ուղղակի և թե՛ որպես անուղղակի ծախս: Օրինակ, եթե ծախսերի օբյեկտը սահմանվի ոչ թե ծրագրի միջոցառման, այլ դրա բաղադրիչների մակարդակում, ապա միջոցառմանն առնչվող ուղղակի ծախսերի մի մասն այդ բաղադրիչների մակարդակում կարող են հանդես գալ որպես վերջիններիս գծով անուղղակի օժանդակ ծախսեր:

6.2.3 Ծախսերի դասակարգումն ըստ ծախսերի վարքագծի

67. Ծախսերի դասակարգումն ըստ ծախսերի վարքագծի ցույց է տալիս, թե ինչպես է տվյալ ռեսուրսի սպառումը փոխվում արտադրության ծավալների փոփոխությանը համապատասխան: Այդ նպատակով առանձնացվում են ֆիքսված, փոփոխուն և խառը վարքագծով ծախսեր:

68. **Ֆիքսված ծախսերը** մնում են անփոփոխ՝ անկախ արտադրության ծավալների փոփոխությունից: Որպես կանոն, ֆիքսված ծախսերի վարքագիծը և մակարդակը մնում է անփոփոխ միայն որոշակի ժամանակահատվածի համար (կամ կարճաժամկետ հատվածում, կամ էլ ուսումնասիրվող ժամանակահատվածում) և արտադրության որոշակի մակարդակի սահմաններում: Նման օրինակ են հանդիսանում շենքերի վարձակալության ծախսերը, ապահովագրության ծախսերը, վարչական անձնակազմի ծախսերը և այլն: Երկարաժամկետ հատվածում և արտադրության ծավալների էական փոփոխության

պայմաններում բոլոր ծախսերը, վերջին հաշվով, կարող են ենթարկվել փոփոխությունների:

69. Որպես կանոն, անուղղակի ծախսերը հիմնականում հանդիսանում են ֆիքսված ծախսեր, թեև դրանք կարող են պարունակել նաև փոփոխուն ծախսերի տարրեր: Միաժամանակ, կան նաև որոշ ուղղակի ծախսեր, որոնք կարող են դասակարգվել որպես ֆիքսված ծախսեր:

70. **Փոփոխուն ծախսերը** փոփոխվում են արտադրության ծավալների փոփոխության հետ՝ աճում են, երբ ծավալներն աճում են և նվազում են դրանց նվազմանը զուգընթաց: Փոփոխուն ծախսերի օրինակ են հանդիսանում նյութածախսերը, աշխատուժի ուղղակի ծախսումները և այլն: Չնայած, որ ուղղակի ծախսերն ու փոփոխուն ծախսերը սահմանվում են տարբեր սկզբունքներով, սովորաբար ուղղակի ծախսերը հիմնականում հանդիսանում են փոփոխուն ծախսեր:

71. Արտադրության ծավալների փոփոխությանը զուգընթաց փոփոխուն ծախսերի վարքագիծը կարող է լինել տարբեր՝ որոշ փոփոխուն ծախսեր կարող են ցուցաբերել գծային կախվածություն արտադրության ծավալների փոփոխությունից, իսկ որոշներն էլ ոչ գծային (այսինքն փոփոխվեն արտադրության ծավալներին ոչ համամասնորեն): Ծախսակազմման ընթացքում բարդություններից խուսափելու նպատակով սովորաբար ընդունվում է, որ բոլոր փոփոխուն ծախսերը դրսևորում են գծային կախվածություն՝ ինչը միանգամայն կիրառական է հատկապես կարճաժամկետ հատվածի համար: Այս առումով, ծառայության արդյունքի միավորի գծով փոփոխուն ծախսերը, որպես կանոն, նույնն են արդյունքի բոլոր միավորների համար:

72. **Խառը վարքագծով ծախսերը** չեն կարող ամբողջությամբ դասակարգվել որպես ֆիքսված կամ որպես փոփոխուն ծախսեր, քանզի դրանք միաժամանակ պարունակում են ծախսերի և՛ փոփոխուն և՛ ֆիքսված տարրեր: Տնտեսագիտական գրականության մեջ դրանք հաճախ սահմանվում են որպես մասամբ ֆիքսված կամ մասամբ փոփոխական ծախսեր: Օրինակ՝ կապի ծառայությունների դիմաց ծախսը պարունակում է ֆիքսված ամսավարձ, որը կախված է հեռախոսների քանակից և խոսելավարձ, որը հանդիսանում է փոփոխուն ծախս:

73. Ծախսերի օբյեկտին առնչվող ծախսերի դասակարգումները, դրանց վերաբերյալ ենթադրությունները և տեղեկատվության աղբյուրները պետք է հստակ փաստաթղթավորվեն:

74. Սույն ուղեցույցի հավելված 4-ում ներկայացված է ծախսերի օբյեկտին առնչվող ծախսերի ներկայացման և դասակարգման ձևաչափի օրինակ: Այն թեև չի հանդիսանում վերջնական ձևաչափ և կարող է փոփոխվել կոնկրետ օգտագործողի կարիքներից ելնելով, սակայն հանդիսանում է օգտակար գործիք ծախսակազմման աշխատանքների կազմակերպման համար: Միաժամանակ, սույն ուղեցույցի հավելված 4.1-ում ներկայացված է առնչվող ծախսերի սահմանման և դրանց դասակարգման ստուգաթերթի օրինակ:

7. ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԳՐՈՒՄԸ

75. Ծախսերի վերագրումը դա ծախսակազմման գործընթաց է, որի արդյունքում կոնկրետ ծախսերը համապատասխան չափաքանակներով վերագրվում կամ բաշխվում են ծախսերի օբյեկտներին: Ծախսերի վերագրումը դա ծախսակազմման գործընթացի էությունն է, քանզի դրա արդյունքում հստակեցվում է այն կոնկրետ մեթոդաբանությունը, որով որոշվում է ծախսերի օբյեկտի կողմից յուրաքանչյուր տիպի ռեսուրսի սպառման չափը: Ծախսերի վերագրման մեթոդաբանությունը հստակեցնելուց հետո միայն կարելի է իրականացնել կոնկրետ հաշվարկներ ծախսերի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը ստանալու համար:

76. Բյուջետային ծրագրերի գծով ծախսերի վերաբերյալ ամբողջական և հուսալի տեղեկատվության առկայությունը հանդիսանում է իրազեկված որոշումների կայացման և, հետևաբար, նաև արդյունավետ բյուջետավորման հիմնական նախապայմանը: Այս առումով կարևոր է, որ հնարավորության սահմաններում բյուջետային ծրագրերին/միջոցառումներին վերագրվեն վերջիններիս հետ կապված բոլոր իրական ծախսերը: Այդ մոտեցումն անմիջականորեն բխում է նաև ԾԲ բարեփոխումների տրամաբանությունից և հանդիսանում է վերջինիս հիմնաքարերից մեկը:

77. Ծախսերի վերագրումը ծախսերի օբյեկտներին իրականացվում է երկու հիմնական մեթոդով՝ ծախսերի ուղղակի վերագրում ծախսերի օբյեկտներին և ծախսերի բաշխում ծախսերի օբյեկտների միջև:

7.1 Ծախսերի ուղղակի վերագրումը

78. Ծախսերի ուղղակի վերագրումը ենթադրում է տվյալ ծախսատեսակի ամբողջությամբ և ուղղակիորեն վերագրում կոնկրետ մեկ ծախսերի օբյեկտին: Ծախսերի ուղղակի վերագրման մեթոդը կիրառվում է բոլոր տիպի ուղղակի ծախսերը ծախսերի օբյեկտներին վերագրելու համար: Օրինակ՝ միայն մեկ ծառայության մատուցման մեջ լրիվ աշխատաժամանակով ներգրավված աշխատողի վարձատրության գծով ծախսերը պետք է ամբողջությամբ և ուղղակիորեն վերագրվեն տվյալ ծառայությանը:

7.2 Ծախսերի վերագրումը բաշխումների միջոցով

79. Ծախսերի բաշխումներն իրականացվում են այն դեպքում, երբ հնարավոր չի դրանք ուղղակիորեն և ամբողջությամբ վերագրել մեկ կոնկրետ ծախսերի օբյեկտի: Այս դեպքում մեկից ավելի ծախսերի օբյեկտներին առնչվող կամ այլ կերպ ասած, անուղղակի ծախսերը բաշխվում են ծախսերի օբյեկտների միջև՝ ելնելով այդ օբյեկտների կողմից տվյալ ռեսուրսի/ծախսերի սպառման հարաբերական մասնաբաժիններից:

80. Ծախսերի բաշխման կանոնները պետք է սահմանվեն հնարավորինս արդար և խելամիտ՝ ելնելով ծախսերի օբյեկտների և համապատասխան ռեսուրսների սպառման մակարդակի միջև առկա պատճառահետևանքային կապերից: Խնդիրը կայանում է

նրանում, որ հաճախ հնարավոր չի լինում սահմանել հստակ պատճառահետևանքային կապեր: Այդ իսկ պատճառով, անուղղակի ծախսերի բաշխման համար կիրառվում են երկու հիմնական մեթոդներ՝

- **Ծախսերի բաշխում կոնկրետ պատճառահետևանքային կապի հիման վրա** - այն դեպքերում, երբ առկա է հստակ պատճառահետևանքային կապ ծախսերի օբյեկտի և դրա կողմից սպառվող անուղղակի ծախսերի միջև, ապա այդ անուղղակի ծախսերը բաշխվում են համապատասխան ծախսերի օբյեկտների միջև՝ կոնկրետ պատճառահետևանքային կապից ելնելով: Օրինակ՝ մեկից ավելի ծառայությունների արտադրության մեջ ներգրավված և ժամավարձով աշխատող աշխատակցի վարձատրության գծով ծախսերն ուղղակիորեն կապված են վերջինիս կողմից ծախսվող աշխատաժամանակի հետ: Հետևաբար, այդ աշխատակցի վարձատրության գծով ծախսերը կարող են համապատասխան ծառայություններին վերագրվել, ելնելով դրանցից յուրաքանչյուրի վրա ծախսվող աշխատաժամանակից:
- **Ծախսերի բաշխում որոշակի խելամիտ եղանակով** - այն դեպքերում, երբ հնարավոր չի ներկայացնել որոշակի հստակ պատճառահետևանքային կապ ծախսերի օբյեկտների և համապատասխան անուղղակի ծախսերի սպառման միջև, ապա այդ անուղղակի ծախսերը ծախսերի օբյեկտների միջև բաշխվում են որոշակի խելամիտ եղանակով: Օրինակ անձնակազմի կառավարման ստորաբաժանման ծախսերը կարող են բաշխվել մատուցվող ծառայությունների վրա ելնելով վարձատրության ընդհանուր ֆոնդում յուրաքանչյուր ծառայության գծով նախատեսված վարձատրության չափի համամասնություններից:

81. Անուղղակի ծախսերի բաշխման մեթոդաբանության ընտրության վրա կարող են ազդել բազմաթիվ գործոններ, այդ թվում և բաշխվող ծախսերի էականությունը: Մասնավորապես, եթե բաշխման ենթակա ծախսերը կազմում են ընդհանուր ծախսերի զգալի մասը, ապա այս դեպքում անհրաժեշտ է ապահովել բավականին մեծ ճշտություն, այնինչ փոքր կամ ոչ էական անուղղակի ծախսերի պարագայում կարելի է պարզապես ընտրել բաշխումների առավել պարզ կամ կիրառական տարբերակը:

7.2.1 Բաշխման հիմքը

82. Ծախսերի օբյեկտների և համապատասխան ռեսուրսների սպառման մակարդակի միջև առկա պատճառահետևանքային կապերի բացահայտումն ի վերջո հանգում է այն Ծախսային գործոնների բացահայտմանն ու առանձնացմանը, որոնք հանգեցնում են ծախսերի մակարդակի կամ այլ կերպ ասած ծախսերի օբյեկտի կողմից համապատասխան ռեսուրսների սպառման մակարդակի փոփոխության:

83. Ծախսային գործոնները պայմանավորում են ծախսերի մակարդակն ու դրանց փոփոխության դինամիկան: Ծախսերի օբյեկտների վրա կարող են ազդել բազմաթիվ ծախսային գործոններ և ծախսակազմման նպատակով ծախսային գործոնների

ընտրությունը պետք է իրականացվի համապատասխան պատճառահետևանքային կապերի մանրամասն վերլուծությունների արդյունքում:

84. **Բաշխման հիմքը** դա այն ծախսային գործոններն են, որոնք ծախսակազմման ընթացքում ընտրվել են կոնկրետ անուղղակի ծախսերի բաշխումներն իրականացնելու նպատակով: Ծախսերի բաշխման հիմքերի ընտրությունն անհրաժեշտ է իրականացնել զգուշությամբ, քանզի դա կարող է բերել տարբերվող արդյունքների և, հետևաբար, ազդել նաև կառավարչական վարքագծի վրա: Ամեն դեպքում, որպես ծախսերի բաշխման հիմք ընտրված ծախսային գործոնը պետք է ապահովի ռեսուրսների սպառման վերաբերյալ վստահելի և հուսալի տեղեկատվություն և միաժամանակ լինի մատչելի՝ ապահովելով ծախսերի բաշխման գործառույթի ընդհանուր ծախսարդյունավետությունը: Սույն փաստաթղթի հավելված 5-ում ներկայացված են ծախսերի բաշխման նպատակով կիրառվող ծախսային գործոնների ընտրության օրինակներ, որոնք կարող են օգտակար լինել գործնականում ծախսերի բաշխումներ իրականացնելու ժամանակ:

7.2.2 Ծախսերի վերագրման գործընթացի նկարագրությունը

85. Ծախսերի վերագրման ողջ գործընթացը կարելի է ներկայացնել որպես հետևյալ հաջորդական քայլերի ամբողջություն (տես նաև գծապատկեր 1-ը) .


- Ծախսերը ծախսերի օբյեկտներին վերագրելու մեթոդաբանության որոշում
 - Պարզել, թե տվյալ ծախսերի օբյեկտը կապված է արդյոք մեկից ավելի ծրագրերի հետ կամ արդյոք տվյալ ծրագրի ներքո առկա են մեկից ավելի ծախսերի օբյեկտներ:
 - Պարզել տվյալ ծախսերի օբյեկտի հետ կապված բոլոր ուղղակի և անուղղակի ծախսերը և դասակարգել դրանց:
- Ծախսերի օբյեկտի հետ կապված բոլոր ուղղակի ծախսերի ուղղակիորեն վերագրում վերջինիս:
- Ծախսերի օբյեկտի հետ կապված բոլոր անուղղակի ծախսերի վերագրում վերջինիս՝ իրականացնելով ծախսային բաշխումներ:
 - Պարզել բոլոր անուղղակի ծախսերը, որոնց համար հնարավոր է սահմանել հստակ պատճառահետևանքային կապ ռեսուրսների սպառման մակարդակի հետ և որոշել բաշխումների հիմք հանդիսացող ծախսային գործոնները:
 - Պարզել բոլոր անուղղակի ծախսերը, որոնց համար հնարավոր չի սահմանել հստակ պատճառահետևանքային կապ ռեսուրսների սպառման մակարդակի հետ և սահմանել բաշխումների իրականացման այլ խելամիտ կանոններ (օրինակ, եթե ծախսերի օբյեկտի հետ կապված ուղղակի ծախսերը հիմնականում աշխատուժին առնչվող ծախսեր են, ապա անուղղակի ծախսերի բաշխման համար կարող է կիրառվել մարդ-օրերի հարաբերակցությունը, իսկ եթե ուղղակի ծախսերն ավելի բազմաբնույթ են,

ապա լրիվ գործառնական ծախսերը կարող են հանդես գալ որպես բաշխման հիմք):

- Իրականացնել ծախսերի բաշխումներ համաձայն ընդունված մեթոդաբանության:

86. Ծախսերի վերագրման ողջ գործընթացը պետք մանրամասն փաստաթղթավորվի՝ այդ թվում ծախսերի վերագրման մեթոդները, բաշխման կանոնները, պատճառահետևանքային կապերը, բաշխման հիմք հանդիսացող ծախսային գործոնները, դրանց հետ կապված բոլոր ենթադրությունները և տեղեկատվության աղբյուրները: Սույն փաստաթղթի հավելվածներ 6-ում և 7-ում ներկայացված են ծախսերի վերագրման և բաշխման նպատակով կիրառվող աղյուսակային ձևաչափեր, որոնք օգտակար են ծախսերի վերագրման իրականացման և դրա վերաբերյալ տեղեկատվության փաստաթղթավորման ու ներկայացման համար:

Գծապատկեր 1. Ծախսերի օբյեկտներին ծախսերի վերագրման գործընթացի սխեմատիկ պատկեր



7.2.3 Գործնական նկատառումներ ծախսերի բաշխումների կիրառության վերաբերյալ

87. Գործնականում ծախսերի վերագրման հետ կապված հիմնական դժվարություններն ի հայտ են գալիս այն դեպքում, երբ երկու և ավելի ծրագրերի/միջոցառումների համար սահմանված ծախսերի օբյեկտներն ունեն ընդհանուր անուղղակի ծախսեր (տիպիկ օրինակը մեկից ավելի ծրագրեր իրականացնող կազմակերպության վերադիր ծախսերն են):

88. Ստորև ներկայացված են որոշ օգտակար խորհուրդներ կապված ծախսերի բաշխման գործառույթների ներդրման և իրականացման հետ.

- Հնարավորության սահմաններում բյուջետային ծրագրերին/միջոցառումներին պետք է վերագրվեն վերջիններիս հետ կապված բոլոր իրական ծախսերը: Այդ նպատակով, ծախսերի օբյեկտները պետք է փոխկապակցվեն կոնկրետ ծրագրերի հետ, այսինքն պետք է խուսափել այն դեպքերից, երբ միևնույն օբյեկտը միաժամանակ հանդես է գալիս որպես երկու և ավելի ծրագրերի ծախսերի օբյեկտ:
- Ծախսերի օբյեկտներին հնարավորության սահմաններում պետք է վերագրվեն վերջիններիս հետ կապված բոլոր ծախսերը: Անուղղակի ծախսերի առկայության դեպքում, ծախսակազմման փաստաթղթերում պետք է հստակ առանձնացվեն այդ ծախսային տարրերը:

7.3 Ստանդարտ ծախսերը

89. Ծախսակազմման գործընթացը հեշտացնելու և միատեսակ ծառայությունների գծով ծախսերը համադրելի և կանխատեսելի պահելու նպատակով, կարող են նախապես սահմանվել ստանդարտներ այդ ծառայությունների մատուցմանն առնչվող ծախսերի/ռեսուրսների տիպերի և դրանց սպառման չափերի վերաբերյալ:

90. Այս ստանդարտները կամ այլ կերպ ասած ծախսային նորմատիվները, սովորաբար սահմանվում են միավորի հաշվարկով (օրինակ՝ արդյունքի միավորի գծով, մեկ շահառուի գծով, միավոր մակերեսի հաշվով և այլն) և օգտակար են այն դեպքերում, երբ առկա է իրականացվող գործառույթների որոշակի կայունություն, այսինքն, երբ իրականացվող աշխատանքի տիպն ու ծավալները գերազանցապես միատեսակ են: Այդպիսի իրավիճակներում ստանդարտ ծախսերը կարող են օգտակար լինել ինչպես բյուջետավորման, այնպես էլ վերահսկողության և կատարողականի գնահատման համար:

91. Ընդհանուր առմամբ, ստանդարտ ծախսերը հետապնդում են երկու հիմնական նպատակ՝ ծախսակազմում և որակի սահմանում: Առաջին դեպքում ստանդարտի կիրառության նպատակը ծախսերը համադրելի, կանխատեսելի և հնարավորինս ցածր ու խնայողական պահելն է (տիպիկ օրինակը պետական կառավարչական հիմնարկների

պահպանման ծախսերի համար սահմանված նորմատիվներն են, որոնք վերաբերվում են գազի, ջրի, հոսանքի, գործուղումների, կապի, տրանսպորտի և այլ ծախսերին):

92. Երկրորդ դեպքում ստանդարտների կիրառության նպատակը ծառայությունների մատուցման որակական չափորոշիչների սահմանումն է (սովորաբար նվազագույն կամ միջին): Վերջիններս սահմանելով առանձին ծախսերի գծով նվազագույն կամ միջին ընդունելի նորմեր, դրանով իսկ կանխորոշում են այս կամ այն ծառայության մատուցման նպատակով սպառվող ռեսուրսները և դրանց մակարդակը (տիպիկ օրինակը՝ երեխաների շուրջօրյա խնամքի ծառայությունների համար սահմանված ծախսային նորմատիվներն են):

93. Անկախ դրանց նպատակից, կարևոր է, որ այդ ստանդարտները սահմանվեն իրատեսական մակարդակում, հակառակ դեպքում դրանք առաջ կբերեն բազմաթիվ խնդիրներ ինչպես ծառայությունների արտադրության, այնպես էլ դրանց վերահսկողության և արդյունքների գնահատման հարցում:

94. Ստորև բերված են մի շարք ուղղորդիչ սկզբունքներ, որոնք օգտակար են ստանդարտ ծախսերի կիրառության ժամանակ՝

- Ստանդարտ ծախսերը պետք է սահմանվեն ելնելով արդյունավետ գործունեության չափանիշներից և դրա համար անհրաժեշտ ծախսերից: Ցանկալի է, որ դրանք սահմանվեն գիտական ճանապարհով՝ ծախսերի վերաբերյալ մանրամասն և համակողմանի տեխնիկական վերլուծությունների արդյունքում:
- Բոլոր ծախսային ստանդարտները և դրանք սահմանող իրավական ակտերը պետք է գույքագրվեն և դասակարգվեն ըստ վերջիններիս նպատակների (ծախսակազմում կամ որակի սահմանում), ըստ բնույթի (պարտադիր կամ հայեցողական), ըստ կիրառության ոլորտների/ծրագրերի և ըստ ծախսային տարրերի, որոնց վրա տարածվում են այդ նորմատիվները և այլն: Սույն փաստաթղթի հավելված 9-ում ներկայացված է ծախսային ստանդարտների գույքագրման ձևաչափի օրինակ:
- Կարևոր է, որ ստանդարտ ծախսերը սահմանվեն իրատեսական մակարդակում, ուստի անհրաժեշտ է պարբերաբար (ծախսակազմման ստանդարտների համար երկու տարվա, իսկ որակի ստանդարտների համար 3-ից 5 տարվա պարբերականություն) թարմացնել և վերանայել այդ ստանդարտները:
- Անհրաժեշտ է հստակ առանձնացնել և փաստաթղթավորել ստանդարտ ծախսերի կիրառության բոլոր դեպքերը: Այդ նպատակով, ծախսակազմման ձևաչափերում պետք է հստակ առանձնացվեն այն ծախսային տարրերը, որոնց ծախսակազմման համար կիրառվել են ստանդարտ ծախսեր (տես սույն փաստաթղթի հավելվածներ 4-ը և 7-ը) և ներկայացվեն դրանց կիրառության հիմնավորումներն, ինչպես նաև կատարվեն հղումներ համապատասխան ստանդարտները սահմանող իրավական հիմքերին:

7.4 Սահմանային ծախսերը

95. Սահմանային ծախսը դա ընդհանուր ծախսերի փոփոխությունն է, որն առաջանում է արտադրության ծավալների փոփոխության արդյունքում: Ավելի կոնկրետ, սահմանային ծախսերը ցույց են տալիս արտադրության արդյունքները մեկ միավորով փոփոխելու դեպքում ընդհանուր ծախսերի փոփոխության չափը:

96. Սահմանային ծախսակազմումը ելնում է այն տեսանկյունից, որ հանրային ապրանքների և ծառայությունների ծավալների փոփոխության արդյունքում ոչ բոլոր ծախսերն են, որ փոխվում են կամ փոխվում են համամասնորեն: Այս առումով, սահմանային ծախսակազմումը կենտրոնանում է միայն այն ծախսերի վրա, որոնք կապված են արտադրության միավորի փոփոխության հետ: Սահմանային ծախսակազմումը պահանջում է ծախսերի բաժանում փոփոխուն և ֆիքսված ծախսային տարրերի, այսինքն հիմնվում է ծախսերի ըստ վարքագծի դասակարգումների վրա (տես սույն փաստաթղթի «Ծախսերի դասակարգումները» հատվածը):

97. Սահմանային ծախսակազմման տեխնիկան արդյունավետ կերպով կիրառվում է արտադրելու կամ գնելու այլընտրանքի և արտադրության ծավալների շուրջ որոշումների կայացման, հիմնական գործոնային վերլուծությունների, իրացման/մատուցման գների սահմանման և այլ նպատակներով:

98. Թեև այս տեխնիկայի կիրառման պայմաններում կայուն ծախսերը չեն վերագրվում արդյունքի միավորին, այնուամենայնիվ, վերջիններս անպայմանորեն հաշվի են առնվում սովյալ ծառայության գծով ընդհանուր ծախսերը հաշվելիս:

99. Ինչպես և մյուս բոլոր դեպքերում, սահմանային ծախսակազմում իրականացնելու դեպքում ևս անհրաժեշտ է այդ մասին կատարել նշում ծախսակազմման համապատասխան փաստաթղթերում՝ ներկայացնելով անհրաժեշտ հիմնավորումներ: Սույն փաստաթղթի հավելված-7 ում ներկայացված է ծախսերի վերագրման աղյուսակի ձևաչափի օրինակ, որը կարող է կիրառվել նաև սահմանային ծախսակազմում իրականացնելիս:

7.5 Հաշվարկների իրականացումը և արդյունքների ստուգումը

100. Ծախսերի վերագրման մեթոդների ընտրությունից և փաստաթղթավորումից հետո ծախսակազմման ավարտական փուլը հանդիսանում է թվային հաշվարկների իրականացումն ու արդյունքների ստուգումը:

101. Այս փուլում գործնականում իրականացվում են իրական հաշվարկներ, ինչպես նաև այդ հաշվարկների, ենթադրությունների և արդյունքների ստուգումներ՝ համոզվելու համար, որ վերջիններս բխում են ծախսակազմման համար սահմանված նպատակներից:

102. Սույն փաստաթղթի հավելված 8-ում ներկայացված է հաշվարկների իրականացման և արդյունքների ստուգման ստուգաթերթի օրինակ:

8. ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԾԱԽՍԱԿԱԶՄՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

103. Սույն հատվածում ներկայացված են գործնական ուղեցույցներ բյուջետավորման փուլում ծախսակազմման հետ կապված գործառույթների իրականացման վերաբերյալ:

8.1 Աճողական բյուջետավորում

104. Աճողական բյուջետավորման համակարգը հիմնվում են այն գաղափարի վրա, որ բյուջետային պարտավորությունները հիմնականում շարունակական են տարիների ընթացքում և բյուջետային որոշումներ կայացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նախորդ տարիների նկատմամբ նախատեսվող փոփոխություններին (աճողական ծախսերին):

105. Ի տարբերություն սահմանային ծախսերի, որոնք ցույց են տալիս արտադրության արդյունքները մեկ միավորով փոփոխելու դեպքում ընդհանուր ծախսերի փոփոխության չափը, աճողական ծախսերը ներառում են նաև ընդհանուր ծախսերի փոփոխությունները այլ գործոնների ազդեցության արդյունքում (նոր գործառույթների ներդրում, ֆիքսված ծախսերի կրճատում, լրացուցիչ ներդրումների իրականացում և այլն):

106. Այս եղանակը հանդիսանում է բյուջետավորման պարզ եղանակ, և հիմնականում հաջողությամբ կիրառվում է այնպիսի ծառայությունների ծախսակազմման համար, որոնք համեմատաբար կայուն են և տարեց-տարի զգալի փոփոխությունների չեն ենթարկվում:

107. Աճողական բյուջետավորման գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդական քայլերի տեսքով՝

- Բազային տարվա ընտրություն,
- Բազային տարվա ցուցանիշներում փոփոխություններ առաջ բերող գործոնների բացահայտում և դասակարգում,
- Գործոններից յուրաքանչյուրի ազդեցությամբ ծախսերի փոփոխության չափի գնահատում,
- Ծախսային գնահատականների հետ կապված հիմնական ռիսկերի բացահայտում:

Բազային տարվա ընտրությունը

108. Բազային տարին դա այն տարին է, որի նկատմամբ դիտարկվում է ծախսերի փոփոխությունը: Կարևոր է, որ բազային տարին ընտրվի այնպես, որ այդ ժամանակահատվածի համար առկա լինեն համապատասխան ծախսերի օբյեկտի գծով փաստացի ծախսերի վերաբերյալ առավել թարմ, հուսալի և ամբողջական տեղեկատվություն:

Գործոնների բացահայտումը և դասակարգումը

109. Ծախսերի մակարդակի փոփոխության վրա կարող են ազդել հիմնականում երկու խումբ ծախսային գործոններ՝

- **Ոչ գնային գործոններ** - այն գործոններն են, որոնք անմիջականորեն հանգեցնում են ծախսերի օբյեկտի կողմից համապատասխան ռեսուրսների սպառման մակարդակի փոփոխության (օրինակ՝ մատուցվող ծառայությունների քանակի ավելացումը):
- **Գնային գործոններ** – դրանք ազդում են ռեսուրսների գների փոփոխության վրա (օրինակ՝ նվազագույն աշխատավարձի բարձրացումը և այլն):

110. Այս առումով, անհրաժեշտ է բացահայտել և առանձնացնել ծախսերի մակարդակի փոփոխության վրա ազդող բոլոր ծախսային (գնային և ոչ գնային) գործոնները, ինչպես նաև այդ գործոնների մակարդակներում բազային տարվա համեմատ նախատեսվող փոփոխությունները:

111. Ծախսակազմման փաստաթղթերում անհրաժեշտ է ներկայացնել նաև հիմնավորումներ ծախսերի վրա ազդող գործոնների ընտրության և բյուջետավորվող տարում բազային տարվա համեմատ այդ գործոններում կանխատեսվող փոփոխությունների վերաբերյալ: Հիմնավորումները պետք է պարունակեն նաև տեղեկատվություն այն ընդհանուր երևույթների/գործոնների/հանգամանքների վերաբերյալ, որոնք ազդել են համապատասխան գործոններում կանխատեսվող փոփոխությունների վրա (օրինակ պահանջարկի փոփոխություն, իրավական ակտերի ընդունում և այլն): Սույն փաստաթղթի հավելված 10-ում ներկայացված է ծախսային գործոնների և ծախսերի վրա դրանց ազդեցության մեխանիզմների ներկայացման ձևաչափի օրինակ:

Գործոններից յուրաքանչյուրի ազդեցությամբ ծախսերի փոփոխության չափի գնահատում

112. Տարբեր ծախսային գործոններ տարբեր կերպ և չափով են ազդում ծախսերի մակարդակի փոփոխության վրա: Իրազեկված որոշումների կայացման համար գործոններից յուրաքանչյուրի ազդեցությունը ծախսերի (դրա առանձին տարրերի) մակարդակի վրա անհրաժեշտ է հնարավորության սահմաններում ներկայացնել և վերլուծել այլ գործոններից մեկուսացված ձևով: Նման մոտեցումը հնարավորության է տալիս հասկանալ գործոններից յուրաքանչյուրի կարևորությունը և դրանց ազդեցությունը ծախսերի ընդհանուր մակարդակի փոփոխության վրա:

113. Սույն փաստաթղթի հավելված 11-ում ներկայացված է աճողական բյուջետավորման և գործոնային վերլուծությունների իրականացման նպատակով կիրառվող աղյուսակային ձևաչափերի օրինակներ:

Ծախսային գնահատականների հետ կապված հիմնական ռիսկերի բացահայտում

114. Կախված իրավիճակից, ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնների գծով կանխատեսումները կարող են իրականացվել տարբեր ճշտությամբ և հավանականությամբ: Ծախսային գնահատականների հուսալիությունն ապահովելու նպատակով, կարևոր է հասկանալ ծախսային գործոնների գծով ենթադրությունների հետ կապված ռիսկերը և դրանց հնարավոր ազդեցությունը ծախսերի վրա:

115. Այդ առումով, գործնականում օգտակար է ծախսերի այլընտրանքային սցենարների մշակման պրակտիկան, որի դեպքում բացի հիմնական սցենարից, մշակվում, ներկայացվում և քննության են առնվում նաև այլ ծախսային սցենարներ՝ ելնելով ծախսային գործոնների հնարավոր շեղումների մակարդակից:

116. Ծախսերի այլընտրանքային սցենարների մշակումն իրականացվում է հետևյալ քայլերի հաջորդականությամբ.

- Հիմնական սցենարի համեմատ շեղման առավել մեծ հավանականություն ունեցող գործոնների բացահայտում: Գործոնների շեղման հավանականությունը գնահատելու համար որպես աղբյուր կարող են ծառայել պատմական տվյալները, կանխատեսումները և այլ հնարավոր աղբյուրներ: Գործոնների ընտրությունը պետք է պատշաճ ձևով հիմնավորվի:
- Հնարավոր շեղումների չափի գնահատում: Ընտրված գործոնների մակարդակի վերաբերյալ արված ենթադրություններում հնարավոր շեղումների չափի գնահատման համար նույնպես որպես աղբյուր կարող են ծառայել պատմական տվյալները, կանխատեսումները, վերլուծությունները և այլն: Շեղումների հնարավոր չափը նույնպես պետք է պատշաճ ձևով հիմնավորվի:
- Ծախսային գնահատականների վրա գործոնների շեղման հնարավոր ազդեցության գնահատում: Այդ նպատակով կարող են կիրառվել հիմնական սցենարի մշակման համար կիրառվող ձևաչափերը (տես սույն փաստաթղթի հավելվածներ 10-ը և 11-ը):
- Այլընտրանքային սցենարների արդյունքներով ծախսերի գնահատման հիմնական սցենարի հետ կապված ռիսկերի բացահայտում և ներկայացում (ներառում է գործոններում արված ենթադրություններում հնարավոր շեղումները և դրանց հնարավոր ազդեցությունները ծախսերի (դրա առանձին տարրերի և արդյունքների վրա):

8.2 Ոչ աճողական բյուջետավորում

117. Ի հակադրություն աճողական բյուջետավորման համակարգի, ոչ աճողական բյուջետավորման համակարգը հիմնվում է այն գաղափարի վրա, որ որևէ ծախսային պարտավորություն նախորդ տարիներից չի կարող ուղղակիորեն փոխանցվել հաջորդ տարվա բյուջե, քանի դեռ հաջորդ տարում այդ պարտավորությունների իրականացման նպատակահարմարության և ձևի շուրջ որոշումներ չեն կայացվել:

118. Այս դեպքում ծրագրի/միջոցառումների ծախսակազմման ժամանակ ծախսերը չեն պլանավորվում աճողական մոտեցմամբ, այլ հիմնական ուշադրությունը կենտրոնանում է

միջոցառումների և դրանց գծով ծախսային այլընտրանքների մշակման և քննության հարցերի վրա:

119. Ոչ աճողական բյուջետավորման համակարգերը կիրառվում են աճողական բյուջետավորման համակարգի հիմնական թերությունները հաղթահարելու համար և հանրային հատվածում հիմնականում կիրառական են նոր ծրագրերի/միջոցառումների համար, որոնց ծախսակազմումն, ըստ էության, իրականացվում է զրոյից սկսած, ինչպես նաև այնպիսի միջոցառումների բյուջետավորման համար, որոնց բովանդակությունը, մատուցման ձևն ու գերակայությունը կարող է զգալիորեն փոխվել տարեց-տարի:

120. Այս համակարգերի հիմնական առավելությունը կայանում է նրանում, որ դրանցում շեշտադրում է արվում ձեռք բերվող արդյունքներին և արդյունավետությանը, ինչը համահունչ է ԾԲ բարեփոխումների տրամաբանությանը: Համակարգի հիմնական թերությունը դա վերջինիս բարդությունն ու աշխատատարությունն է, ինչպես նաև ծախսային այլընտրանքների համեմատության և իմաստալից ոչ ֆինանսական ցուցանիշների սահմանման հետ կապված բարդությունները:

121. Ոչ աճողական բյուջետավորման գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդական քայլերի տեսքով՝

- Ծրագրի/միջոցառման նպատակի, նկարագրության և սպասվող օգուտների սահմանում և նկարագրություն,
- Միջոցառումը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրների բացահայտում,
- Միջոցառման այլընտրանքների մշակում
- Ֆինանսավորման աղբյուրների հստակեցում և հետագա տարիների կանխատեսումների իրականացում
- Նախընտրելի այլընտրանքների ընտրություն և հիմնավորում

122. Միջոցառման այլընտրանքների մշակումը հանդիսանում է ոչ աճողական բյուջետավորման հիմնաքարերից մեկը: Այլընտրանքները կարող են վերաբերվել ինչպես սպասվող արդյունքներին և դրանց հետ կապված ծախսերին, այնպես էլ տվյալ միջոցառման իրականացման եղանակներին:

123. Կախված միջոցառման առանձնահատկություններից, հնարավոր այլընտրանքները կարող են լինել տարբեր քանակության: Ցանկացած դեպքում, այլընտրանքների թիվը չպետք է լինի չափից ավելի շատ (սովորաբար, ոչ ավելի քան 5-ը):

124. Ներկայացված այլընտրանքների մեջ պարտադիր կարգով պետք է դիտարկվի համապատասխան միջոցառումը նվազագույն մակարդակում (այն մակարդակը, որից ներքև հնարավոր չի հասնել սահմանված նպատակներին) իրականացնելու, իսկ նախորդ տարիներից շարունակվող միջոցառումների պարագայում՝ նաև արդյունքները կամ ծախսերը ներկայիս մակարդակում պահելու այլընտրանքները:

125. Միջոցառման իրականացման եղանակների այլընտրանքները վերաբերվում են հիմնականում արտադրելու կամ գնելու այլընտրանքին, պետական կամ մասնավոր

հատվածին պատվիրակելու այլընտրանքին, տարբերակված ժամանակային հորիզոնների այլընտրանքներին, ինչպես նաև սպառվող ռեսուրսների համախմբության այլընտրանքներին:

126. Ներկայացված այլընտրանքներից յուրաքանչյուրի համար անհրաժեշտ է ներկայացնել պահանջվող ռեսուրսների/ծախսերի և սպասվող արդյունքների գնահատականները, ինչպես նաև մյուս այլընտրանքների համեմատ առավելություններն ու թերությունները:

127. Բացի միջոցառման իրականացման այլընտրանքներից, անհրաժեշտ է ներկայացնել նաև տվյալ միջոցառումը չիրականացնելու կամ դադարեցնելու դեպքում ծագող խնդիրներն ու դրանց հետևանքները:

128. Սույն փաստաթղթի հավելված 12-ում ներկայացված է ոչ աճողական բյուջետավորման ձևաչափի օրինակ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ծախսերի վերաբերյալ տեղեկատվության օգտագործումը

ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

(Օրինակներ)

Ստորև ներկայացված են մի շարք որոշումներ և հարցեր, որոնց պատասխանելու համար սկզբունքային նշանակություն ունի ծախսերի վերաբերյալ ճիշտ տեղեկատվության առկայությունը:

1. Բյուջետավորում և ռեսուրսների գնահատում

Ծախսակազմումն անհրաժեշտ է բյուջետային ծրագրերի/միջոցառումների գծով ռեսուրսների պլանավորման համար: Այն օգնում է պատասխանել հետևյալ հարցերին՝

- ի՞նչ կարժենա նոր ծրագրի իրականացումը,
- որո՞նք են ծառայություններն ավելի բարձր որակով մատուցելու հետ կապված լրացուցիչ ծախսերը,
- ո՞րն է տվյալ ծրագրի, միջոցառման կամ գործառույթի համար համարժեք բյուջեն,
- ինչպե՞ս է տվյալ նախաձեռնությունը ազդում այլ ծրագրերի գծով ծախսերի վրա և այլն:

2. Ներքին հսկողություն և կատարողականի գնահատում

Ծախսակազմման վերաբերյալ տեղեկատվությունը անհրաժեշտ է ծախսերը վերահսկելու, ռիսկերը կառավարելու և կատարողականի գնահատման համար: Այն օգնում է պատասխանել հետևյալ հարցերին՝

- որքա՞ն է տվյալ ծառայության/ապրանքի միավորի արժեքը համեմատած նախորդ ժամանակահատվածի հետ,
- ինչպե՞ս են հաշվարկվում մեկ շահառուի գծով ծախսերը,
- ինչպե՞ս կարելի է ճիշտ համեմատություն կատարել տարբեր տարածաշրջաններում միևնույն ծառայության մատուցման համար պահանջվող ծախսերի միջև,
- ծառայությունները մատուցվում են արդյո՞ք ծախսարդյունավետ ձևով,
- վերջնական արդյունքները ձեռք են բերվում արդյո՞ք արդյունավետ ձևով,
- ինչու՞ են փաստացի ծախսերը բարձր կամ ցածր պլանավորված ցուցանիշներից և այլն:

3. Գնագոյացում կամ ծառայությունների դիմաց վճարների սահմանում

Ծախսակազմումն անհրաժեշտ է հանրային ապրանքների և ծառայությունների դիմաց վճարների կամ գների սահմանման համար: Այն օգնում է պատասխանել հետևյալ հարցերին՝

- որո՞նք են տվյալ ծառայության/ապրանքի հետ կապված ամբողջական ծախսերը,
- ինչպե՞ս է ձևավորվում ծառայության միավորի գծով ինքնարժեքը և գինը,
- ինչպիսի՞ն է ծառայության միավորի ներկայիս ինքնարժեքը այն ծառայության համար, որի գինը կամ վճարը սահմանվել է տարիներ առաջ,

- ի՞նչ ազդեցություն կունենա ծառայության/ապրանքի դիմաց վճարի նվազեցումը և այլն:

4. Ծրագրի իրականացման այլընտրանքներ

Ծախսակազմումն անհրաժեշտ է ծրագրի/միջոցառման իրականացման այլընտրանքների քննության և համեմատության համար: Այն օգնում է պատասխանել հետևյալ հարցերին՝

- ինչպիսի՞ն է ծախսերի տարբերությունը տվյալ ծառայությունը պատվիրակելու կամ սեփական ուժերով արտադրելու այլընտրանքների միջև,
- ինչպիսի՞ն կլինեն միանգամյա կամ շարունակական խնայողությունները, եթե դադարեցվի տվյալ ծառայության մատուցումը,
- ինչպիսի՞ն կլինեն ծախսերը, եթե այդ ծառայության/միջոցառման իրականացումը պատվիրակվի կառավարման այլ մակարդակներին և այլն:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ծախսակազմման նպատակը

ԾԱԽՍԱԿԱԶՄՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

(Ձևաչափի օրինակ)¹

ԾԱԽՍԱԿԱԶՄՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ¹
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ ¹
Նկարագրել այն կառավարչական որոշումները, որոնց աջակցելու է ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ¹
Նկարագրել այն օրենսդրական, գերատեսչական և հայեցակարգային կամ քաղաքականության պահանջները, որ կարող են ազդել ծախսակազմման նպատակների կամ ծախսերի կառուցվածքի վրա ¹
Նկարագրել բյուջեփայլին ծրագրի/միջոցառման շահառուներին ¹
Նկարագրել ծախսակազմման գործառույթի շրջանակները: Նշել գործընթացում ներգրավված կազմակերպությունները, ծրագրի/միջոցառման շրջանակներում իրականացվող գործառույթները, ծրագրին օժանդակող ծառայությունները ¹
Նկարագրել այլ ծրագրերը/միջոցառումները, որոնց վրա կարող է ազդել այս ծախսակազմման նախաձեռնությունը ¹
Նկարագրել ծախսակազմմանը ծածկվող ժամանակային հորիզոնը ¹
Նկարագրել ծախսակազմման նպատակը սահմանելիս արված ենթադրությունները և դրանց հիմնավորումները
Եթե ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը անհրաժեշտ է պարբերական կարգով, ապա նշել համապատասխան պարբերականությունը

¹Ձևաչափը չի հանդիսանում վերջնական և ծախսակազմման նպատակներից և առանձնահատկություններից ելնելով դրանում կարող են կատարվել ձևափոխություններ

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ծախսերի օբյեկտները

ԾԱԽՍԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ
(Ձևաչափի օրինակ)²

ԾԱԽՍԵՐԻ ՕԲՅԵԿՏԸ ³	Ծախսերի օբյեկտի տիպը ⁴	Ծախսերի օբյեկտի նկարագրությունը ⁵	Հիմնավորումներ ⁶
ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄՆԵՐ⁷			
<i>Եթե ծախսերի օբյեկտները ամբողջությամբ չեն ծածկում սահմանված նպատակը, ապա նշել այդ մասին և ներկայացնել նման որոշման պարճառները՝</i>			
<i>Եթե ծախսերի օբյեկտներին հնարավոր չի վերագրել վերջինիս հետ կապված բոլոր ծախսերը, ապա նշել այդ մասին և ներկայացնել բացատրություններ՝</i>			

² Ձևաչափը չի հանդիսանում վերջնական և ծախսակազմման նպատակներից և առանձնահատկություններից ելնելով դրանում կարող են կատարվել ձևափոխություններ

³ Նշել ծախսերի օբյեկտի անվանումը

⁴ Նշել ծախսերի օբյեկտի տիպը՝ միջոցառում, արդյունքի ցուցանիշի միավոր, կազմակերպական միավոր, գործընթաց

⁵ Նկարագրել ծախսերի օբյեկտը և դրա առանձնահատկությունները

⁶ Ներկայացնել հիմնավորումներ ծախսերի օբյեկտի սահմանման և ծախսերի օբյեկտի կոնկրետ տիպի ընտրության համար

⁷ Լրացվում են ըստ անհրաժեշտության

ՀԱՎԵԼՎԱԾ 4. Ծախսերի օբյեկտին առնչվող ծախսերը և դրանց դասակարգումը

ԾԱԽՍԵՐԻ ՕՐՅԵԿՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

(Ձևաչափի օրինակ)⁸

Ծախսային տարրերի/ ռեսուրսների տիպը ⁹	Ուղղակի ծախսեր ¹⁰		Անուղղակի ծախսեր ծրագրի ներսում		Անուղղակի ծախսեր ծրագրից դուրս		Ստանդարտ ծախսեր ¹¹	Բացատրություններ և մեկնաբանություններ ¹²
	Ֆիքսված ծախսեր	Փոփոխական ծախսեր	Ֆիքսված ծախսեր	Փոփոխական ծախսեր	Ֆիքսված ծախսեր	Փոփոխական ծախսեր		
1	2	3	4	5	6	7	8	9

⁸Ձևաչափը չի հանդիսանում վերջնական և ծախսակազմման նպատակներից և առանձնահատկություններից ելնելով դրանում կարող են կատարվել ձևափոխություններ

⁹«Ծախսային տարրերի/ռեսուրսների տիպը» սյունակում անհրաժեշտ է ներկայացնել բացառապես տվյալ ծախսերի օբյեկտին առնչվող բոլոր ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի

¹⁰2-ից 8 սյունակների համապատասխան վանդակում անհրաժեշտ է դնել «X» նշանը: Օրինակ, եթե տվյալ ծախսերի օբյեկտին առնչվող որևէ ծախսատեսակ իր բնույթով հանդիսանում է ուղղակի ծախս և միաժամանակ այն ունի փոփոխական վարքագիծ, ապա անհրաժեշտ է համապատասխան տողի 3-րդ սյունակին համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Եթե միևնույն ծախսային տարրի գծով առկա են և ուղղակի և անուղղակի ծախսեր, ապա համապատասխան նշումները պետք է կատարվեն միևնույն տողում:

¹¹Եթե տվյալ ծախսային տարրի համար կիրառվում են ստանդարտ ծախսեր կամ նորմատիվներ, ապա անհրաժեշտ է 8-րդ սյունակի համապատասխան տողում դնել «X» նշանը:

¹²«Բացատրություններ և մեկնաբանություններ» սյունակում անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան հիմնավորումներ տվյալ ծախսատեսակը ծախսերի օբյեկտին առնչվող դիտարկելու և ծախսերի դասակարգման համապատասխան խմբերում այն ներառելու համար: Ստանդարտ ծախսերի կիրառության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան հիմնավորումներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 4.1 Ծախսերի օբյեկտին առնչվող ծախսերը և դրանց դասակարգումը (ստուգաթերթ)

ԾԱԽՍԵՐԻ ՕԲՅԵԿՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ
(Ստուգաթերթ)

1. Նշել, թե որ ֆիսկալ տարիներն են ընդգրկվում ծախսակազմման տվյալ վարժության մեջ՝
2. Կազմակերպական կառուցվածքները և հաշվապահական հաշվառման առկա համակարգը թույլ է տալիս արդյոք հավաքագրել ծախսակազմման նպատակներին և տվյալ ծախսերի օբյեկտին առնչվող բոլոր ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը՝
ԱՅՈ՞ՒՆ ՈՉ Ս
Եթե ոչ, ապա նշել, թե ինչպես է նախատեսվում հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը՝
3. Ինչպիսի՞ տվյալներ են օգտագործվում առնչվող ծախսերը բացահայտելու համար՝
Փաստացի ծախսեր՞ Պատմական ծախսեր՞ Նախահաշիվներ՞ Կանխատեսումներ՞ Այլ (նկարագրել).....
Փաստաթղթավորվել են արդյո՞ք առնչվող ծախսերը , դրանց դասակարգումները և հիմնավորումները՝
ԱՅՈ՞ՒՆ ՈՉ Ս
4. Կանխատեսվող կամ նախահաշվային ծախսերի կիրառության պարագայում նկարագրել կիրառված տեխնիկան և բոլոր ենթադրությունները՝
5 Առնչվող ծախսերը սահմանելիս հաշվի են առնվել արդյո՞ք ծախսերի օբյեկտի հետ կապված ուղղակի ծախսերը՝

ԱՅՈՒ ՈՉՈՒ
6. Առնչվող ծախսերը սահմանելիս հաշվի են առնվել արդյո՞ք ծախսերի օբյեկտին առնչվող անուղղակի ծախսերը, որոնք ներառված են համապատասխան ծրագրում/միջոցառման մեջ՝
ԱՅՈՒ ՈՉՈՒ
7. Առնչվող ծախսերը սահմանելիս հաշվի են առնվել արդյո՞ք ծախսերի օբյեկտին առնչվող անուղղակի ծախսերը, որոնք ներառված չեն համապատասխան ծրագրում/միջոցառման մեջ՝
ԱՅՈՒ ՈՉՈՒ
8. Առնչվող ծախսերը սահմանելու և դասակարգելու համար կիրառվել է արդյոք դրա համար սահմանված փաստաթղթային ձևաչափը՝
ԱՅՈՒ ՈՉՈՒ
Եթե ձևաչափում կատարվել են փոփոխություններ, ապա նշել դրանց բնույթն ու հիմնավորումները՝

ՀԱՎԵԼՎԱԾ 5. Ծախսերի բաշխման նպատակով ծախսային գործոնների կիրառության տարածված օրինակներ

ԾԱԽՍԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ծախսերի գործոնը/ Բաշխման հիմքը	Կիրառությունը	Հիմնական բանաձևը
Աշխատաժամանակ	Կիրառվում է հիմնականում աշխատուժի հետ կապված ծախսերի (աշխատավարձ, դրան հավասարեցված վճարումներ և այլն) կամ անուղղակի ծախսերի բաշխման համար, որոնց վրա այս կամ այն կերպ ազդում է աշխատողների թվաքանակը կամ նրանց գործունեությունը: Պահանջում է աշխատաժամանակի գրանցման հուսալի համակարգի առկայություն կամ աշխատաժամանակի օգտագործման պարբերական ուսումնասիրություններ:	Այս մեթոդի համաձայն ծախսերը ծախսերի օբյեկտների միջև բաշխվում են դրանցից յուրաքանչյուրի վրա ծախսված աշխատաժամանակի համամասնությամբ: <i>(A ծախսերի օբյեկտի վրա աշխատած ժամերի % ընդհանուր աշխատաժամանակից) x (այս մեթոդով բաշխվող ընդհանուր ծախսեր) = (A ծախսերի օբյեկտի վրա բաշխվող ծախսեր):</i>
Աշխատողների թվաքանակ	Կիրառվում է որպես աշխատաժամանակի այլընտրանք՝ հիմնականում այն դեպքերում, երբ առկա չի աշխատաժամանակի գրանցման հուսալի համակարգ:	Այս մեթոդի համաձայն ծախսերը ծախսերի օբյեկտների միջև բաշխվում են դրանցից յուրաքանչյուրի մասով ներգրավված աշխատողների թվաքանակի համամասնությամբ: <i>(A ծախսերի օբյեկտի մասով ներգրավված աշխատողների % ընդհանուր թվաքանակից) x (այս մեթոդով բաշխվող ընդհանուր ծախսեր) = (A ծախսերի օբյեկտի վրա բաշխվող ծախսեր):</i>
Տարածքի մակերես	Կիրառվում է հիմնականում տարածքի մակերեսի հետ ուղղակիորեն կապված ծախսերի (վարձակալության, վճարներ, անշարժ գույքի ապահովագրություն և այլն) կամ տարածքի մակերեսի հետ կապված անուղղակի ծախսերի բաշխման համար (որոշ կոմունալ ծախսեր և այլն):	Այս մեթոդի համաձայն ծախսերը ծախսերի օբյեկտների միջև բաշխվում են դրանցից յուրաքանչյուրի մասով օգտագործվող տարածքի մակերեսի համամասնությամբ: <i>(A ծախսերի օբյեկտի մասով օգտագործվող տարածքի մակերեսի % տարածքի ընդհանուր մակերեսից) x (այս մեթոդով բաշխվող ընդհանուր ծախսեր) = (A ծախսերի օբյեկտի վրա բաշխվող ծախսեր):</i>

<p>Գործարքների քանակ</p>	<p>Կիրառվում է հիմնականում գործարքների իրականացման հետ կապված ծախսերի (որոշ գրասենյակային ապրանքների, թղթի, փոստային և այլ ծախսեր) կամ գործարքների քանակի հետ կապված անուղղակի ծախսերի բաշխման համար (հաճախորդների սպասարկման ծախսեր և այլն):</p>	<p>Այս մեթոդի համաձայն ծախսերը ծախսերի օբյեկտների միջև բաշխվում են դրանցից յուրաքանչյուրի մասով իրականացված գործարքների համամասնությամբ:</p> <p><i>(A ծախսերի օբյեկտի մասով իրականացվող գործարքների % գործարքների ընդհանուր քանակից) x (այս մեթոդով բաշխվող ընդհանուր ծախսեր) = (A ծախսերի օբյեկտի վրա բաշխվող ծախսեր):</i></p>
<p>Տրանսպորտային միջոցների քանակ</p>	<p>Կիրառվում է հիմնականում տրանսպորտային միջոցների օգտագործման հետ կապված ծախսերի (վառելիքի, ապահովագրության, մեքենաների շահագործման և այլ ծախսեր) բաշխման համար:</p> <p>Այս մեթոդի այլընտրանքը դա երթևեկած ճանապարհի երկարությունն է (կիլոմետր), որը սակայն պահանջում է համապատասխան գրանցումների առկայություն:</p>	<p>Այս մեթոդի համաձայն ծախսերը ծախսերի օբյեկտների միջև բաշխվում են դրանցից յուրաքանչյուրի մասով օգտագործված տրանսպորտային միջոցների քանակի համամասնությամբ:</p> <p><i>(A ծախսերի օբյեկտի մասով օգտագործված տրանսպորտային միջոցների % տրանսպորտային միջոցների ընդհանուր քանակից) x (այս մեթոդով բաշխվող ընդհանուր ծախսեր) = (A ծախսերի օբյեկտի վրա բաշխվող ծախսեր):</i></p>

ՀԱՎԵԼՎԱԾ 6. Անուղղակի ծախսերի բաշխման աղյուսակ

ԱՆՈՒՂՂԱԿԻ ԾԱԽՍԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

(Ձևաչափի օրինակ)¹³

Ծախսերի բաշխման նպատակը¹⁴

Ծախսային տարրերը ¹⁵	Ծախսերի բաշխման կանոնը (բաշխման հիմքը) ¹⁶	Չափման միավորը ¹⁷	Ընդամենը			Ծախսերի օբյեկտ 1			Ծախսերի օբյեկտ... ¹⁸					
			Ծախսային գործոնի մեծությունը ¹⁹	Բաշխվող գումարը (<< դրամ) ²⁰		Գործոնի մեծությունը	Բաշխված գումարը (<< դրամ)		Գործոնի մեծությունը	Բաշխված գումարը (<< դրամ)				
				Փոփոխում	Ֆիքսված		Ընդամենը	Փոփոխում		Ֆիքսված	Ընդամենը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
ԸՆԴԱՄԵՆԸ			X				X				X			

¹³Ձևաչափը չի հանդիսանում վերջնական և ծախսակազմման նպատակներից և առանձնահատկություններից ելնելով դրանում կարող են կատարվել ձևափոխություններ

¹⁴ «Ծախսերի բաշխման նպատակը» հատվածում համառոտ ներկայացվում է ծախսերի բաշխման անհրաժեշտության հիմնավորումները, ինչպես նաև նշվում է այն կոնկրետ ծրագիրը/միջոցառումը, որի ծախսերը/դրա մի մասը բաշխվում են համապատասխան ծախսերի օբյեկտների միջև

¹⁵ «Ծախսային տարրերի» սյունակում անհրաժեշտ է ներկայացնել բաշխման ենթակա բոլոր ծախսային տարրերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի

¹⁶ «Ծախսերի բաշխման կանոնը» սյունակում նշվում է կոնկրետ ծախսային տարրի գծով ծախսերի բաշխման նպատակով ընտրված ծախսային գործոնը կամ բաշխման համար սահմանված այլ կանոնը

¹⁷Ներկայացվում է համապատասխան բաշխման հիմքի չափման միավորը

¹⁸Երկուսից ավելի ծախսերի օբյեկտների միջև ծախսերի բաշխման դեպքում աղյուսակում կարող են ավելացվել համապատասխան սյունակներ

¹⁹4-րդ սյունակում նշվում է համապատասխան ծախսային գործոնի ընդհանուր մեծությունը, որի համամասնություններից ելնելով իրականացվում է կոնկրետ ծախսատեսակի բաշխումը, իսկ 8-րդ,12-րդ և անհրաժեշտության դեպքում այլ ծախսերի օբյեկտների համար ավելացվող համապատասխան սյունակներում նշվում է տվյալ ծախսային գործոնի՝ կոնկրետ ծախսերի օբյեկտներին համապատասխանող մեծությունը կամ մասնաբաժինը

²⁰5,6 և 7-րդ սյունակներում նշվում է համապատասխան ծախսային տարրի գծով բաշխվող գումարի ընդհանուր մեծությունը ըստ ծախսերի տեսակի, իսկ 9-ից 11-րդ և13-ից 15-րդ սյունակներում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այլ ծախսերի օբյեկտների համար ավելացվող համապատասխան սյունակներում նշվում է տվյալ բաշխման արդյունքում կոնկրետ ծախսերի օբյեկտներին համապատասխանող գումարների մեծությունը

ՀԱՎԵԼՎԱԾ 7. Ծախսերի վերագրման աղյուսակ

ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԳՐՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ (Ձևաչափի օրինակ)²¹

Ծախսային տարրերը ²²	Ֆիքսված ծախսեր ²³ (ՀՀ դրամ)		Փոփոխուն ծախսեր (ՀՀ դրամ)		Ընդամենը (ՀՀ դրամ) ²⁴	Ծախսերի վերագրման համար կիրառված մեթոդաբանությունը ²⁵
	Ուղղակի ²⁶ ծախսեր	Անուղղակի ²⁷ ծախսեր	Ուղղակի ծախսեր	Անուղղակի ծախսեր		
1	2	3	4	5	6	7
ԸՆԴԱՄԵՆԸ						X

²¹Ձևաչափը չի հանդիսանում վերջնական և ծախսակազմման նպատակներից և առանձնահատկություններից ելնելով դրանում կարող են կատարվել ձևափոխություններ

²² «Ծախսային տարրերի» սյունակում անհրաժեշտ է ներկայացնել բացառապես տվյալ ծախսերի օբյեկտին առնչվող բոլոր ծախսային տարրերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի

²³2-րդ և 3-րդ սյունակները լրացվում են միայն այն ծախսային տարրերի համար, որոնց գծով ծախսերը հանդիսանում են տվյալ ծախսերի օբյեկտի համար ֆիքսված ծախսեր, իսկ 4-րդ և 5-րդ սյունակները՝ համապատասխանաբար փոփոխուն ծախսերի համար

²⁴6-րդ սյունակում նշվում է տվյալ ծախսային տարրի գծով ընդհանուր ծախսերը (սյուն 2 + սյուն 3+ սյուն 4+ սյուն 5)

²⁵7-րդ սյունակում կատարվում են նշումներ ծախսերի վերագրման համար կիրառված մեթոդաբանության վերաբերյալ: Ուղղակի ծախսերի պարագայում պարզապես նշվում է «Ծախսերի ուղղակի վերագրում» արտահայտությունը և անհրաժեշտության դեպքում ներկայացվում են այլ նշումներ կամ հիմնավորումներ կապված այդ ծախսերը ուղղակի ձևով վերագրելու հետ: Անուղղակի ծախսերի պարագայում նշվում է ծախսերի վերագրման մեթոդը («Ծախսերի բաշխում կոնկրետ պատճառահետևանքային կապի հիման վրա» կամ «Ծախսերի բաշխում որոշակի կանոնի հիման վրա»), բաշխման հիմքերը (ծախսային գործոնները, կամ այն կանոնները որոնց հիման վրա իրականացվել է տվյալ ծախսատեսակի բաշխումը), դրանց ընտրության հիմնավորումը և այլ անհրաժեշտ տեղեկություններ ըստ հայեցողության: Այս հատվածում կարող են հղումներ կատարվել նաև ծախսերի բաշխման նպատակով կազմված «Անուղղակի ծախսերի բաշխման աղյուսակների» վրա: Ստանդարտ ծախսերի կիրառության դեպքում անհրաժեշտ է կատարել նշում այդ մասին՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ

²⁶2-րդ և 4-րդ սյունակները լրացվում են միայն այն ծախսային տարրերի համար, որոնց գծով ծախսերը հանդիսանում են տվյալ ծախսերի օբյեկտին ուղղակիորեն վերագրվող ծախսեր:

²⁷3-րդ և 5-րդ սյունակները լրացվում են միայն այն ծախսային տարրերի համար, որոնց գծով ծախսերն անուղղակիորեն են վերագրվում տվյալ ծախսերի օբյեկտին, այլ կերպ ասած այդ ծախսերը վերագրվում են անուղղակի ծախսերի բաշխման արդյունքում

ՀԱՎԵԼՎԱԾ 8. Ծախսակազմման հաշվարկների իրականացումը և արդյունքների ստուգումը

ԾԱԽՍԱԿԱԶՄՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ
(Ստուգաթերթ)

1. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
<i>1.1 Ծախսակազմման նպատակով կիրառվել են արդյո՞ք բոլոր սահմանված ձևաչափերը</i>
ԱՅՈ <input type="checkbox"/> ՈՉ <input type="checkbox"/>
